

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Պատանին և զինվորական ծառայությունը	1
2. Պատանին և առողջությունը	2
ՀՀ և Երևանի առավել խոշոր բուժական հաստատությունների ցանկ	18
Հիվանդությունների և ֆիզիկական թերությունների ցանկ	19
3. Պատանին և կրթությունը	42
4. Պատանին և նրա կենսապայմանները	50
Հայաստանի Հանրապետության օրենքը այլընտրանքային ծառայության մասին	54
Գլուխ 1. Ընդհանուր դրույթներ	54
Գլուխ 2. Այլընտրանքային ծառայության գորակոչ կազմա- կերպելը	56
Գլուխ 3. Այլընտրանքային ծառայություն անցնելը	59
Գլուխ 4. Եզրափակիչ և անցումային դրույթներ	64
Այլընտրանքային ծառայություն անցնելու վայրերի ցանկը... 65	
ՀՀ օրենքը սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զին- վորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին.66	
5. Ուշադրություն	71
6. Պետական մարմինների և պաշտոնական անձանց անօրինա- կան գործողությունների կամ անգործունեությունների վերաբերյալ բողոքների օրենսդրական հիմքը	73
7. Ում դիմել գորակոչիկի իրավունքների պաշտպանության համար	74
Հասարակական-իրավապաշտպան կազմակերպություն- ներ.....	76
Ձեզ անհրաժեշտ հասցեներ և հեռախոսահամարներ	77
8. Հարց ու պատասխան	79

1. ՊԱՏԱՆԻՆ ԵՎ ՁԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

«Յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը»:

(ՀՀ Սահմանադրություն, գ. 2, հ. 47)

«Նախագորակոչիկը», «ՀՀ զինապարտության մասին» օրենքի համաձայն, 16-ից մինչև 18 տարին լրացած արական սեռի քաղաքացին է:

«Չորակոչիկը», «ՀՀ զինապարտության մասին» օրենքի համաձայն, 18-ից մինչև 27 տարին լրացած արական սեռի քաղաքացին է:

ՀՀ «Չինապարտության մասին» օրենքի համաձայն

Չինապարտությունը Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցելու՝ քաղաքացիների սահմանադրական պարտականությունն է:

Չինապարտներ են համարվում նախագորակոչային, զորակոչային տարիքի եւ պահեստագործում հաշվառված արական, ինչպես նաեւ զինվորական մասնագիտություն ունեցող կամ զինվորական ծառայություն անցած իգական սեռի քաղաքացիները:

(ՀՀ Օրենքը ՉՄ, գ. 1, հ. 3)

Պարտադիր զինվորական ծառայության են զորակոչվում 18-ից մինչեւ 27 տարեկան արական սեռի զորակոչիկները եւ առաջին խմբի պահեստագործի սպաները, ովքեր առողջական վիճակի պատճառով ճանաչվել են զինծառայության համար պիտանի՝ խաղաղ պայմաններում:

* Պարտադիր¹ զինվորական ծառայության զորակոչվելու ենթակա չեն այն անձինք, որոնց նկատմամբ կատարվում է հետաքննություն (նախաքննություն, դատաքննություն) կամ ովքեր նախկինում դատապարտվել են ազատագրկման՝ ծանր կամ առնվազն երկու

¹ * այս նշանը ցույց է տալիս զինվորական օրենսդրության նոր փոփոխությունները:

անգամ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար եւ ազատագրկման վայրում պատիժը կրել են 3 տարուց ոչ պակաս, ինչպես նաեւ, եթե կատարել են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության եւ Հայաստանի Հանրապետության դատախազության հաստատած ցանկում նշված հանցագործություն:

* Շարքային կազմի զորակոչը եւ զորացրումը կատարվում է Հանրապետության Նախագահի հրամանագրով՝ տարին երկու անգամ՝ ապրիլ-հունիս եւ հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին:

(ՀՀ Օրենքը 2Մ, գ. 4, հ.11)

Քաղաքացիները պարտավոր են զինվորական հաշվառման համար ներկայանալ իրենց բնակության վայրի զինվորական կոմիսարիատ (դիվանագիտական, հյուպատոսական մարմիններ):

(ՀՀ օրենքը 2Մ գ.2, հ.6)

ՊԱՐՏԱԴԻՐ ՁԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

* Պարտադիր զինվորական ծառայության են զորակոչվում 18-ից մինչեւ 27 տարեկան արական սեռի զորակոչիկներն ու առաջին խմբի պահեստագործի սպաները, ովքեր առողջական վիճակի պատճառով ճանաչվել են զինծառայության համար պիտանի՝ խաղաղ պայմաններում:

* Պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու ենթակա չեն այն անձինք, որոնց նկատմամբ կատարվում է հետաքննություն (նախաքննություն, դատաքննություն) կամ ովքեր նախկինում դատապարտվել են ազատագրկման՝ ծանր կամ առնվազն երկու անգամ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար եւ ազատագրկման վայրում պատիժը կրել են 3 տարուց ոչ պակաս, ինչպես նաեւ, եթե կատարել են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության եւ Հայաստանի Հանրապետության դատախազության հաստատած ցանկում նշված հանցագործություն:

* Շարքային կազմի զորակոչը եւ զորացրումը կատարվում է Հանրապետության Նախագահի հրամանագրով՝ տարին երկու անգամ՝ ապրիլ-հունիս եւ հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին:

* Պարտադիր զինվորական ծառայության զորակոչը հայտարարելուց հետո բոլոր զորակոչիկները, ինչպես նաև 27 տարեկանից բարձր տարիքի զորակոչիկները՝ ՉՄ օրենքի 14 հոդվածի 4-րդ կետով նախատեսված դեպքում (Պետական գիտակրթական համակարգի ասպիրանտուրայում պետական պատվերով սովորողները, եթե նրանք ուսումն ավարտում են 27 տարեկանից բարձր տարիքում, պարտադիր զինվորական ծառայության են կանչվում ասպիրանտուրան ավարտելուց հետո), պարտավոր են ծանոցագրում նշված ժամկետում ներկայանալ այն զինվորական կոմիսարիատ, որտեղ նրանք հաշվառված են:

* Պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ժամանակ բնակության վայրին մոտ գտնվող զորամասում ծառայելու արտոնությունից օգտվում են՝

ա) միայնակ անաշխատունակ հոր կամ մոր միակ զավակը.

բ) Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության, զինված ուժերում կամ այլ զորքերում ծառայության ընթացքում գոհված (մահացած) հայր (մայր) կամ եղբայր (քույր) ունեցող զորակոչիկները.

գ) ամուսնացած եւ մեկ երեխա ունեցող զորակոչիկները.

դ) երկկողմ եւ միակողմ ծնողագուրկ զորակոչիկները:

* Բնակության վայրին մոտ գտնվող զորամաս է համարվում Երեւան քաղաքի համար՝ մինչեւ 50 կմ տեղակայված զորամասը (այդպիսին չլինելու դեպքում՝ ամենամոտ զորամասը), իսկ մյուս բնակավայրերի համար՝ մինչեւ 30 կմ տեղակայված զորամասը (այդպիսին չլինելու դեպքում՝ ամենամոտ զորամասը):

* Չինված ուժերում կամ այլ զորքերում միաժամանակ զորակոչվող եղբայրները, իրենց ցանկությանը, ծառայության են զորակոչվում միեւնույն զորամաս:

(ՀՀ օրենքը ՉՄ, գ. 4, հ.11)

* Ռազմաուսումնական հաստատությունների ընդունելության կարգը հաստատում է կառավարությունը:

Ժամկետային զինվորական ծառայություն անցած կամ անցնող քաղաքացիները ռազմաուսումնական հաստատություններ կարող

են ընդունվել մինչեւ 23 տարին լրանալը:

Ռազմական ուսումնական հաստատություններ ընդունված քաղաքացիները համարվում են պարտադիր զինվորական ծառայության զինծառայողներ, օգտվում են օրենսդրությամբ նրանց համար սահմանված իրավունքներից ու արտոնություններից եւ կրում պարտականություններ՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Այդ հաստատություններից ազատված եւ հեռացված անձինք **փոխհատուցում են իրենց ուսման հետ կապված ծախսերն** ու գորակոչվում (ուղարկվում) են պարտադիր զինվորական ծառայության՝ ընդհանուր հիմունքներով: Ջինվորական ծառայության ժամկետը տվյալ դեպքում հաշվարկվում է միայն առողջական վիճակի պատճառով ազատված անձանց ուսման եւ զինվորական ծառայության ընթացքում ռազմաուսումնական հաստատություններ ընդունված քաղաքացիների նախկինում ծառայած ժամանակաշրջանը:

(ՀՀ օրենքը ՁՄ, գ. 3, հ.10)

Քաղաքացիները պարտավոր են զինվորական հաշվառման համար ներկայանալ իրենց բնակության վայրի զինվորական կոմիսարիատ (ղիվանագիտական, հյուպատոսական մարմիններ):

Բնակության վայրը փոխելու դեպքում զինապարտները զինվորական հաշվառման կանգնելու համար պարտավոր են ներկայանալ համապատասխան զինվորական կոմիսարիատ (ղիվանագիտական, հյուպատոսական մարմիններ) զինվորական հաշվառումից դուրս գալուց եւ բնակության նոր վայր ժամանելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Ջինապարտներն իրենց ընտանեկան դրության, բնակության վայրի, կրթության, աշխատավայրի եւ պաշտոնի փոփոխությունների մասին պարտավոր են յոթօրյա ժամկետում հայտնել բնակության վայրի զինվորական կոմիսարիատ (ղիվանագիտական, հյուպատոսական մարմիններ):

(ՀՀ օրենքը ՁՄ, գ.2, հ. 6)

Պարտադիր զինվորական ծառայության գորակոչն անցկացնելու համար կառավարության սահմանած կարգով ստեղծվում են գորակոչային հանձնաժողովներ՝ ըստ զինվորական կոմիսարիատների կողմից սպասարկվող տարածքների՝ տեղական և, ըստ

մարզերի, մարզային (Երեւանի քաղաքային):

Տեղական զորակոչային հանձնաժողովների կազմը հաստատում է մարզպետը (Երեւանի քաղաքապետը)՝ համապատասխան զինվորական կոմիսարի ներկայացմամբ:

Հանձնաժողովի նախագահ է համարվում զինվորական կոմիսարը:

Տեղական զորակոչային հանձնաժողովները՝

- կազմակերպում են զորակոչիկների բժշկական քննությունը,
- որոշումներ են ընդունում զորակոչի եւ զորակոչիկներին՝ ըստ զորատեսակների զինված ուժերում եւ այլ զորքերում զինվորական ծառայության ուղարկելու մասին, որոշում են ընդունում եւ մարզային (Երեւանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովի հաստատմանն են ներկայացնում զորակոչիկներին՝ ընտանեկան դրության բերումով եւ ուսումը շարունակելու համար տարկետում տալու վերաբերյալ փաստաթղթերը,

- նախապատրաստում եւ մարզային (Երեւանի քաղաքային) զորակոչային հանձնաժողով են ներկայացնում ՁՄ օրենքով չնախատեսված դեպքերում զորակոչիկներին ընտանեկան դրության բերումով տարկետում տալու վերաբերյալ փաստաթղթերը,

- նախապատրաստում եւ կենտրոնական բժշկական հանձնաժողով են ներկայացնում զորակոչիկներին բժշկական քննության արդյունքներով տարկետում տալու եւ պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու վերաբերյալ փաստաթղթերը՝ եզրակացության համար,

- քննարկում են ռազմատնտեսական հաստատություններ ընդունելու մասին դիմումները եւ կայացնելու որոշում:

Մարզային (Երեւանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովները կազմում է կառավարությունը: Հանձնաժողովի նախագահ է համարվում համապատասխան մարզպետը (Երեւանի քաղաքապետը):

Մարզային (Երեւանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովները՝

- համակարգում են տեղական զորակոչային հանձնաժողովների գործունեությունը,

- հաստատում են զորակոչիկներին ընտանեկան դրության բերումով եւ ուսումը շարունակելու համար տարկետում տալու մասին

տեղական գորակոչային հանձնաժողովների որոշումները,

- որոշում են ընդունում գորակոչիկների ընտանեկան դրության բերումով ՁՄ օրենքով չնախատեսված դեպքերում տարկետում տալու վերաբերյալ եւ դա ներկայացնում հանրապետական գորակոչային հանձնաժողով:

(ՀՀ օրենքը ՁՄ, գ. 4, հ. 17)

Ջորակոչի ժամանակաշրջանում տեղական եւ մարզային (Երեւանի քաղաքային) գորակոչային հանձնաժողովների աշխատանքը ղեկավարելու եւ գործունեությունը վերահսկելու համար կառավարությունն ստեղծում է **հանրապետական գորակոչային հանձնաժողով**:

Հանրապետական գորակոչային հանձնաժողովը՝

- քննարկում է տեղական կամ մարզային (Երեւանի քաղաքային) գորակոչային հանձնաժողովների որոշումների վերաբերյալ գանգատները,

- որոշում է ընդունում առողջական վիճակի պատճառով պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու, բուժման համար մինչեւ 1 տարի ժամանակով եւ առողջական վիճակի հետ կապված՝ 2 անգամ՝ 3 տարով տարկետում տալու մասին,

-* եզրակացություն է տալիս ընտանեկան դրության բերումով՝ ՁՄ օրենքով չնախատեսված դեպքերում տարկետում տալու մասին մարզային (Երեւանի քաղաքային) գորակոչային հանձնաժողովների որոշումների վերաբերյալ եւ ներկայացնում պաշտպանության նախարարին:

Տեղական կամ մարզային (Երեւանի քաղաքային) գորակոչային հանձնաժողովի որոշման վերաբերյալ գորակոչիկի կամ այլ անձանց գանգատը, մինչեւ դրա վերանայումը, չի կասեցնում որոշման կատարումը:

Հանրապետական գորակոչային հանձնաժողովի որոշումները, դրանց ընդունման օրվանից մեկ ամսյա ժամկետում, կարող են գանգատարկվել դատարան՝ օրենքով սահմանված կարգով:

(ՀՀ օրենքը ՁՄ, գ. 4, հ.18)

Պարտադիր զինվորական ծառայությունից ազատվում է՝

ա) հանրապետական գորակոչային հանձնաժողովի կողմից առողջական վիճակի պատճառով զինծառայության համար ոչ պիտանի ճանաչված քաղաքացին՝ հանվելով զինվորական հաշվա-

ռումից.

բ) այն քաղաքացին, ում հայրը (մայրը) կամ հարազատ եղբայրը (քույրը) զոհվել (մահացել) է Հայաստանի Հանրապետության պաշտպանության կամ զինված ուժերում եւ այլ զորքերում ծառայողական պարտականություններ կատարելու ժամանակ, եւ նա այդ ընտանիքի միակ արու զավակն է.

գ) քաղաքացին՝ կառավարության որոշմամբ.

դ) մինչեւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունն ընդունելն օտարերկրյա պետությունների զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայություն անցած քաղաքացին.

ե) * գիտական աստիճան (գիտության թեկնածու կամ գիտության դոկտոր) ունեցող քաղաքացին, եթե նա զբաղվում է մասնագիտական, գիտական կամ մանկավարժական գործունեությամբ:

(ՀՀ օրենքը ՉՄ, գ.4, հ. 12)

***Ձինծառայողների եւ զինապարտների իրավունքները,
պարտականություններն ու պատասխանատվությունները***

- Ձինծառայողների եւ զինապարտների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են ՉՄ օրենքով, այլ օրենքներով եւ իրավական ակտերով:

- Չինվորական հաշվառման պարտականություններ կատարելու, գորակոչային տեղամասերին կցագրվելու եւ վարժական հավաքների կանչվելու ընթացքում մշտական աշխատանքի վայրում պահպանվում է քաղաքացիների աշխատատեղը (պաշտոնը) եւ միջին աշխատավարձը:

- Ժամկետային զինվորական ծառայության զորակոչից, վարժական հավաքից, զորահավաքից եւ զինվորական հաշվառումից խուսափելու, ինչպես նաեւ զինվորական հանցագործություններ, զինվորական հաշվառման բնագավառում իրավախախտումներ կատարելու համար զինծառայողները եւ զինապարտները պատասխանատվության են ենթարկվում օրենսդրությամբ սահմանված կարգով:

-* Չինվորական ծառայություն չանցած զինապարտները, բացի ՉՄ օրենքի 30 հոդվածի 4 կետից, չեն կարող նշանակվել պետական պաշտոնների: Այդ պաշտոնների ցուցակը հաստատում է կառավարությունը:

2. ՊԱՏԱՆԻՆ ԵՎ ԱՌՈՂՁՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք:

(ՀՀ Սահմ., գ.2, հ.17)

Յուրաքանչյուր ոք ունի առողջության պահպանման իրավունք: Բժշկական օգնության և սպասարկման կարգը սահմանվում է օրենքով:

(ՀՀ Սահմ., գ.2, հ. 34)

Վերջին տարիներին հայ պատանիների մեծ մասն ունի առողջական տարբեր շեղումներ, որոնք սահմանափակում են նրանց պիտանիությունը զինվորական ծառայության: Գրանցվել են ոչ քիչ փաստեր, երբ առանձին զորակոչային հանձնաժողովներում անտեսվում են զորակոչիկների հիվանդությունները և ֆիզիկական արատները:

Այդ իսկ պատճառով զորակոչիկը պետք է ժամանակին դիմի անկախ բժիշկ-մասնագետի: Մինչև զորակոչիկային հանձնաժողովի բժշկական զննումը, պատանուն հարկ է իմանալ, արդյոք, ունի հիվանդություն, որը սահմանափակում է նրա պիտանիությունը ծառայության մեջ և ստանալ համապատասխան փաստաթղթեր:

Հիվանդությունների թվարկումը, որը լրիվ կամ մասնակիորեն ազատում է պատանուն զինծառայությունից նշված է «Հիվանդությունների եւ ֆիզիկական թերությունների ցանկ» բաժնում: Այն հաստատվել է ՀՀ Պաշտպանության նախարարի 07.05.2001թ., թիվ 322 լրացված է 16.01.04թ. թիվ 35 հրամանով:

Եթե բժշկական հետազոտությունների արդյունքում, որը ձեռնարկվել է պատանու և նրա ծնողների նախաձեռնությամբ, ի հայտ է եկել հիվանդություն, որը խանգարում է զինծառայությանը, հարկավոր է ձեռք բերել համապատասխան փաստաթղթեր: Անհրաժեշտ է դեռևս մանկական պոլիկլինիկայից վերցնել երեխայի բժշկական քարտը և այն պահել տանը: Այն կարող է ձեզ շատ օգնել:

Հիվանդությունների ցուցակի երկու բաժինների վրա հարկավոր

է հատուկ ուշադրություն դարձնել: Դրանք են՝ հոգեկան խանգարումների և նյարդային համակարգի հիվանդությունները: Բանն այն է, որ հոգեկան խանգարումների և նյարդային հիվանդությունների կոնկրետ ճշգրիտ ախտորոշումը հնարավոր է միայն ծնողների և մասնագետների համատեղ ջանքերի շնորհիվ:

Ի դեպ, այն պատանիները, որոնք տառապում են հոգեկան խանգարումներով, հաճախ են ձգտում ծառայել բանակում: Նման մարդկանց համար զինծառայությունը հատկապես վտանգավոր է: Բացի այդ, զենք ստանալով, նրանք իրենց, ընկերների կյանքի և առողջության համար դառնում են վտանգավոր: Ծնողների պարտքն է՝ օգնել զորակոչային հանձնաժողովին, քանի որ մի շարք խանգարումներ (հոգեկան ինֆանտիլությունը կամ անձի խանգարումները) միշտ չէ, որ բացահայտվում են զորակոչիկների պլանային բուժզննման ժամանակ: Այնինչ, այդ շեղումները, հիվանդությունների ցուցակի համաձայն, սահմանափակում են զորակոչիկի պիտանիությունը:

Հոգեբույժին կամ ներպաթոլոգին դիմելը պահանջում է որոշակի նախապատրաստում: Բժշկին պետք կլինեն մանկական պոլիկլինիկայից տղայի բժշկական քարտը և շատ հարցերի վերաբերյալ տեղեկություններ:

Մտտիկ հարազատների առողջական վիճակը կամ մահվան պատճառը: Հարազատների շրջանում հոգեկան խանգարումների դեպքերի և նյարդային հիվանդությունների, ջղաձգային նոպաների, ինքնասպանության, հիվանդագին հատկություններով օժտված անձանց, հարբեցողների, թմրամոլների, տևական ծանր հիվանդությամբ տառապող անձանց առկայությունը:

Ներարգանդային զարգացման փուլը: Ծնողների տարիքը, որերորդ հղիությունը, հղիության շրջանում մոր առողջական վիճակը (վարակիչ, թունավոր, հղիության ընդհատման փորձ և այլն): Ծնվել է ժամանակին, կամ թերաճ է, ծննդաբերությունն ընթացել է նորմալ կամ շեղումներով:

Վաղ զարգացման շրջանը: Նորմալ զարգացում կամ կասեցում (խոսք, քայլք, հետաքրքրություններ), գլխուղեղի օրգանական անբավարարության նշաններ, քթից արյունահոսություն, լուսնոտություն, քնի մեջ խոսելը, գիշերային վախ, էնուրեզ, ջղաձգության երևույթներ և բարձր ջերմաստիճանի դեպքում՝ զառանցում:

Ընտանիքում դաստիարակության պայմանները: Ընտանեկան առանձնահատուկ իրավիճակներ:

Ուսման շրջան: Ունակությունները, ջանասիրությունը, հարաբերություններն ընկերների և ուսուցիչների հետ և այլն:

Բնավորության առանձնահատկություններն ու խառնվածքը: Մարդամոտ, մեկուսացած և այլն, մարդկանց և պարտականությունների նկատմամբ վերաբերմունքը (բարյացակամ, չոր, աշխատասեր և այլն), ինչպես է տանում կոնֆլիկտները և վիրավորանքը, հետաքրքրությունները:

Հիվանդությունները և այլ վնասակար գործոնները, սկսած վաղ մանկությունից: Ռ-սխիստ, օպոմոֆիլիա, թունավոր լուծ, թոքաբորբ, ուղեղաբորբ (մենինգիտ) և մենինգոէնցեֆալիտ, մանկական ինֆեկցիաներ և դրանց բարդացումները, ռևմատիզմ, բրուցելյոզ, մալարիա, տիֆ, գրիպ, մրսածության հիվանդություններ, թարախային ինֆեկցիաների քրոնիկ օջախները (տոնզիլիտ,պիելիտ, օստեոմիելիտ, քրոնիկ թոքաբորբ, ականջների թարախային հիվանդություններ), ներքին օրգանների հիվանդություն, նյութափոխանակության խանգարումներ, գանգաուղեղային վնասվածքներ, թունավորումներ, ակոհոլային և թմրանյութերի օգտագործում (երբ և հաճախականությունը):

Հոգեկան ցնցումներն ու երկարատև կոնֆլիկտները:

Վարքի տարօրինակություն և անսովորություն: Արարքները, ասածները: Ինքնասպանության փորձեր:

Պարտադիր զինվորական ծառայության գորակոչից առողջական վիճակի պատճառով տարկետում ստանալը

Պարտադիր զինվորական ծառայության գորակոչից առողջական վիճակի պատճառով տարկետում տրվում է մինչև 1 տարի ժամանակով կամ 2 անգամ՝ 3 տարով այն անձանց, ովքեր հիվանդության պատճառով զինվորական ծառայության համար ճանաչվել են ժամանակավորապես ոչ պիտանի:

Առողջական վիճակի պատճառով գորակոչից տարկետում կարող է տրվել 2 անգամ՝ 3 տարով: Տարկետման ժամկետը լրանալուց հետո քաղաքացին կամ գորակոչվում է զինվորական ծառայության, կամ ճանաչվում է զինվորական ծառայության համար ոչ պիտանի՝ խաղաղ պայմաններում եւ հաշվառվում պահեստագործում,

կամ ճանաչվում է զինվորական ծառայության համար ոչ պիտանի եւ հանվում զինվորական հաշվառումից:

Առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ժամանակավորապես ոչ պիտանիության եւ այդ կապակցությամբ բուժման նպատակով մինչեւ 1 տարի ժամանակով տարկետում տալու, ինչպես նաեւ զինվորական ծառայության համար խաղաղ պայմաններում ոչ պիտանիության մասին որոշումներն ընդունում է հանրապետական գորակոչային հանձնաժողովը՝ կառավարության ստեղծած կենտրոնական բժշկական հանձնաժողովի եզրակացության հիման վրա:

(ՀՀ օրենքը ԶՄ, գ.4, հ.15)

ՀՀ ՕՐԵՆՔԸ «ԶԻՆԱՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»

Պարտադիր զինվորական ծառայության գորակոչն անցկացնելու համար կառավարության սահմանած կարգով ստեղծվում են գորակոչային հանձնաժողովներ՝ ըստ զինվորական կոմիսարիատների կողմից սպասարկվող տարածքների՝ տեղական, և ըստ մարզերի՝ մարզային (Երեւանի քաղաքային):

Տեղական գորակոչային հանձնաժողովների կազմը հաստատում է մարզպետը (Երեւանի քաղաքապետը)՝ համապատասխան զինվորական կոմիսարի ներկայացմամբ:

Հանձնաժողովի նախագահ է համարվում զինվորական կոմիսարը:

Տեղական գորակոչային հանձնաժողովները՝

- կազմակերպում են գորակոչիկների բժշկական քննությունը,
- որոշումներ են ընդունում գորակոչի եւ գորակոչիկներին՝ ըստ գորատեսակների զինված ուժերում եւ այլ գորքերում զինվորական ծառայության ուղարկելու մասին, որոշում են ընդունում եւ մարզային (Երեւանի քաղաքային) գորակոչային հանձնաժողովի հաստատմանն են ներկայացնում գորակոչիկներին՝ ընտանեկան դրության բերումով եւ ուսումը շարունակելու համար տարկետում տալու վերաբերյալ փաստաթղթերը,

- նախապատրաստում եւ մարզային (Երեւանի քաղաքային) գո-

րակոչային հանձնաժողով են ներկայացնում ՉՄ օրենքով չնախատեսված դեպքերում զորակոչիկներին ընտանեկան դրության բերումով տարկետում տալու վերաբերյալ փաստաթղթերը,

- նախապատրաստում եւ կենտրոնական բժշկական հանձնաժողով են ներկայացնում զորակոչիկներին բժշկական քննության արդյունքներով տարկետում տալու եւ պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու վերաբերյալ փաստաթղթերը՝ եզրակացության համար,

- քննարկում են ռազմատնտեսական հաստատություններ ընդունելու մասին դիմումները եւ կայացնում որոշում:

Մարզային (Երեւանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովները՝ կազմում է կառավարությունը: Հանձնաժողովի նախագահ է համարվում համապատասխան մարզպետը (Երեւանի քաղաքպետը):

Մարզային (Երեւանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովները՝

- համակարգում են տեղական զորակոչային հանձնաժողովների գործունեությունը,

- հաստատում են զորակոչիկներին ընտանեկան դրության բերումով եւ ուսումը շարունակելու համար տարկետում տալու մասին տեղական զորակոչային հանձնաժողովների որոշումները,

- որոշում են ընդունում զորակոչիկների ընտանեկան դրության բերումով ՉՄ օրենքով չնախատեսված դեպքերում տարկետում տալու վերաբերյալ եւ դա ներկայացնում հանրապետական զորակոչային հանձնաժողով:

(ՀՀ օրենքը ՉՄ, գ. 4, հ.17)

Ջորակոչի ժամանակաշրջանում տեղական եւ մարզային (Երեւանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովների աշխատանքը ղեկավարելու եւ գործունեությունը վերահսկելու համար կառավարությունն ստեղծում է ***հանրապետական զորակոչային հանձնաժողով:***

Հանրապետական զորակոչային հանձնաժողովը՝

- քննարկում է տեղական կամ մարզային (Երեւանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովների որոշումների վերաբերյալ գանգատները,

- որոշում է ընդունում առողջական վիճակի պատճառով պար-

տաղիւր զինվորական ծառայութիւնից ազատելու, բուժման համար մինչեւ 1 տարի ժամանակով եւ առողջական վիճակի հետ կապված՝ 2 անգամ՝ 3 տարով տարկետում տալու մասին,

- եզրակացություն է տալիս ընտանեկան դրության բերումով, ՁՄ օրենքով չնախատեսված դեպքերում, տարկետում տալու մասին մարզային (Երեւանի քաղաքային) գորակոչային հանձնաժողովների որոշումների վերաբերյալ եւ ներկայացնում պաշտպանութեան նախարարին:

Տեղական կամ մարզային (Երեւանի քաղաքային) գորակոչային հանձնաժողովի որոշման վերաբերյալ գորակոչիկի կամ այլ անձանց գանգատը, մինչեւ դրա վերանայումը, չի կասեցնում որոշման կատարումը:

Հանրապետական գորակոչային հանձնաժողովի որոշումները, դրանց ընդունման օրվանից մեկ ամսյա ժամկետում, կարող են գանգատարկվել դատարան՝ օրենքով սահմանված կարգով:

(ՀՀ օրենքը ՁՄ, գ. 4, հ.18)

Բժշկական քննությունը պարտադիր անցկացնում են զինվորական կոմիսարիատների հանձնաժողովների բժիշկ մասնագետները՝ զինապարտների կցագրման, գորակոչիկի, զինվորական ծառայության անցնելու եւ վարժական հավաքի կանչվելու ժամանակ: Եթե տեղում հնարավոր չէ ստանալ քաղաքացու՝ զինվորական ծառայությանը պիտանի լինելու մասին բժշկական եզրակացությունը, ապա տեղական գորակոչային հանձնաժողովը պարտավոր է նրան ուղարկել համապատասխան բժշկական հիմնարկ՝ բուժիչ-տագոտում անցկացնելու համար: Այդ բժշկական հիմնարկների ցանկը հաստատում է կառավարությունը:

Չինապարտների բժշկական քննությունը եւ հետազոտումը կատարվում է առաջնահերթ եւ անվճար:

(ՀՀ օրենքը ՁՄ, գ. 3, հ.7)

Պարտադիր զինվորական ծառայության գորակոչից առողջական վիճակի պատճառով տարկետում ստանալը

Պարտադիր զինվորական ծառայության գորակոչից առողջական վիճակի պատճառով տարկետում տրվում է մինչև մեկ տարի ժամանակով կամ 2 անգամ՝ 3 տարով այն անձանց, ովքեր հիվանդության պատճառով զինվորական ծառայության համար ճանաչվել են ժամանակավորապես ոչ պիտանի:

Առողջական վիճակի պատճառով գորակոչից տարկետում կարող է տրվել 2 անգամ՝ 3 տարով: Տարկետման ժամկետը լրանալուց հետո քաղաքացին կամ գորակոչվում է զինվորական ծառայության, կամ ճանաչվում է զինվորական ծառայության համար ոչ պիտանի՝ խաղաղ պայմաններում եւ հաշվառվում պահեստազորում, կամ ճանաչվում է զինվորական ծառայության համար ոչ պիտանի եւ հանվում զինվորական հաշվառումից:

Առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ժամանակավորապես ոչ պիտանիության եւ այդ կապակցությամբ բուժման նպատակով մինչև մեկ տարի ժամանակով տարկետում տալու, ինչպես նաեւ զինվորական ծառայության համար խաղաղ պայմաններում ոչ պիտանիության մասին որոշումներն ընդունում է հանրապետական գորակոչային հանձնաժողովը՝ կառավարության ստեղծած կենտրոնական բժշկական հանձնաժողովի եզրակացության հիման վրա:

Համաձայն ՀՀ կառավարության 7.08.1997 թ. թիվ 325 որոշման «Նախագորակոչային և գորակոչային տարիքի անձանց առողջական վիճակի գնահատման, բժշկական փորձաքննության անցկացման և բժշկական օգնության ու սպասարկման կարգի»

- Բժշկական հսկողության և հաշվառման ենթակա են նախագորակոչային (16-17 տարեկան) և գորակոչային (18-27 տարեկան) տարիքի արական սեռի բոլոր անձինք:

- 15 տարին լրացած արական սեռի անձինք բժշկական հաշվառման են վերցվում պոլիկլինիկաներում կամ ամբուլատորիաներում ընդհանուր պրակտիկայի թերապևտի կողմից՝ ըստ բնակության վայրի:

- Պարբերաբար բժշկական քննության ընթացքում հիվանդու-

թյուն կամ ֆիզիկական թերզարգացում հայտնաբերելու դեպքում 15 տարին լրացած, ինչպես նաև նախագորակոչային տարիքի անձինք ընդհանուր պրակտիկայի թերապեուտի կողմից վերցվում են առանձին հաշվառման: Նշված անձանց բուժումը կատարվում է **պետական պատվերի շրջանակներում**: Հիվանդանոցային պայմաններում բուժումը կազմակերպելու համար հիմք է հանդիսանում ընդհանուր պրակտիկայի թերապեուտի կողմից տրված եւ պոլիկլինիկայի կամ ամբուլատորիայի տնօրենի կողմից կնքված ուղեգիրը:

- Մինչեւ գորակոչը տարածքային ՁԿ պոլիկլինիկաների հետ ճշտվում է գորակոչի ենթակա անձանց ցուցակները, որոնց հիման վրա պոլիկլինիկաները կամ ամբուլատորիաները գորակոչիկների բժշկական քարտերն ուղարկում են կոմիսարիատ՝ գորակոչիկների բժշկական քննության անցկացման համար:

Ջորակոչիկային տարիքի անձանց բժշկական օգնությունը եւ սպասարկումն իրականացվում է **պետական բուժքի միջոցների հաշվին**: Բուժման համար հիմք է հանդիսանում ՁԿ բժշկական հանձնաժողովի կողմից տրված եւ զինկոմի կողմից կնքված ուղեգիրը:

ԻՆՉՊԵՍ ՊԱՇՏՊԱՆԵԼ ՍԵՓԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Սահմանել գործողության ծրագիր: Եթե այնպիսի հիվանդություն ունեք, որ կարող է խոչընդոտել գորակոչին, Դուք հնարավորություն ունեք ստանալու տարկետում, ազատվել գորակոչից, ազատվել զինծառայությունից:

ԳՈՐԾԵՔ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԵՐՊ

1. Ձեր հիվանդությունների մասին նախապես գրավոր տեղեկացրեք զինկոմիսարիատին:

2. Միայն դրանից հետո ներկայացրեք հանձնաժողով և առաջին հերթին համոզվեք, որ Ձեր դիմումը տեղ է հասել ու կցվել Ձեր անձնական գործին:

Եթե Ձեր դիմումը չեն ստացել կամ կցված չէ Ձեր գործին, պահանջեք, որ այն կցեն գործին և այդ մասին նշում կատարեն Ձեր մոտ եղած պատճենի վրա:

3. Ներկայացեք Ձեր (տեղական և մարզային) ՋՀ, ստացեք նրա որոշումը և, այսպես կոչված, «կցման վկայականը», որը զինակոչման ենթակա քաղաքացիների հավաստագիրն (վկայականն) է: (Եթե Դուք պիտանի չեք ծառայության, փաստաթղթերը ձևակերպեք Ձեր զինկոմիսարիատում):

4. Եթե լրացել է Ձեր 18 տարին, ներկայացեք ձեր տեղական (մարզային) զինկոմիսարիատ: Եթե Ձեր առողջական վիճակը թույլ չի տալիս ծառայել բանակում, դիմեք ձեռք ձեռք հիվանդության պատմության մասին գրավոր դիմումով:

5. Ներկայացեք տեղական (մարզային) ՋՀ և հասեք նրան, որ այն ընդունի (ցանկացած) որոշում և նրա նախագահը Ձեզ հանձնի որոշման պատճեն:

6. Եթե տեղական կամ մարզային ՋՀ Ձեր կարծիքով սխալ որոշում է ընդունել Ձեր զորակոչի մասին, Դուք իրավունք ունեք գանգատարկել այդ որոշումը մեկամսյա ժամկետում՝

- կամ հանրապետական զորակոչային հանձնաժողով,
- կամ դատարան:

Առաջին դեպքում դիմում-բողոքը ուղարկում եք հանրապետական ՋՀ՝ տեղական (մարզային) ՋՀ որոշման դեմ:

- Այդ ընթացքում տեղական կամ մարզային զորակոչային հանձնաժողովի որոշման կատարումը, մինչև դրա վերանայումը, չի կասեցվում:

(ՀՀ օրենքը ՁՄ, գ. 4, հ. 18)

Երկրորդ դեպքում դիմում-բողոքը ներկայացնում եք Ձեր բնակավայրի դատարան:

- Այդ ընթացքում տեղական կամ մարզային զորակոչային հանձնաժողովի որոշման կատարումը, մինչև դրա վերանայումը, չի կասեցվում:

(ՀՀ օրենքը ՁՄ, գ. 4, հ. 18)

- Պետք է հիշել, որ տեղական կամ մարզային հանձնաժողովի որոշման վերաբերյալ գորակոչիկի կամ այլ անձանց բողոքը, մինչև դրա վերանայումը, չի կասեցնում որոշման կատարումը:

(ՀՀ օրենքը ՁՄ, գ.4, հ.18)

Հանրապետական Ջորակոչային հանձնաժողովին ուղղված բողոք-դիմումից հետո տարածքային գորակոչային հանձնաժողովը կարող է պահանջել, որպեսզի Դուք ներկայանաք Հանրապետական ռազմաքժշկական հանձնաժողով (BBK):

7. Հանրապետական գորակոչային հանձնաժողովի ծանուցագիրն ստանալուց հետո՝ ներկայացեք բուժզննման և ստացեք որոշումը: Եթե Դուք ազատվել եք գորակոչից կամ Ձեզ տրվել է տարկետում, տեղական (մարզային) զինկոմիսարիատում ձևակերպեք Ձեր փաստաթղթերը:

8. Եթե Դուք համաձայն չեք հանրապետական գորակոչային հանձնաժողովի որոշման հետ՝ կարող եք գանգատարկել դատարան՝ օրենքով սահմանված կարգով:

(ՀՀ օրենքը ՁՄ գ.4, հ.18):

9. Ցանկացած տեղական (տարածքային) դատարանի որոշման դեմ կարելի է վճռաբեկ գանգատ ներկայացնել վերադաս դատարան: Հարկ է նկատել, որ դատարանի ցանկացած որոշում օրինական ուժի մեջ է մտնում և պետք է իրականացվի 10 օր հետո: Մինչև 10 օրը լրանալը այն կարող եք բողոքարկել վերադաս դատարանին: (ՀՀ օրենքը «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և գանգատները քննարկելու կարգի մասին»):

Ձեր օրինական իրավունքները պաշտպանելիս հետևեք «Ուշադրություն» բաժնում շարադրված կանոններին:

**Հայաստանի Հանրապետության և Երևանի
առավել խոշոր բուժական հաստատությունների
գ ա ն կ**

«Էրեբունի» հիվանդանոց

Տիտոգրադյան փողոց, 14, հեռ. 47-17-50

«Արմենիա» բժշկական կենտրոն

Մարգարյան 6, հեռ. 34-50-83

«Մալաթիա» հիվանդանոց

Դ.Վարուժանի փողոց, 28ա, հեռ. 77-39-30

«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն

*Նորքի 3-րդ զանգված, Գյուրջյան 10,
հեռ. 64-11-10 հերթապահ 64-59-00*

Հոգեբուժական դիսպանսերներ

ք. Երևան, Նուբարաշեն, հեռ. 47-52-50

ք. Սևան, հեռ. (261) 2-34-00

«Նորք» հոգեկան առողջության կենտրոն

*ք. Երևան, Հովսեփյան 2ա,
հեռ. 65-08-32*

Հակատուբերկուլյոզային քաղաքային դիսպանսեր

*Երևան, Ռուբինյանց փողոց, 7,
հեռ. 62-58-12, 62-59-00*

Հանրապետական հակատուբերկուլյոզային դիսպանսեր

ք. Աբովյան, հեռ. (222) 2-04-48, 2-38-30

**Հանրապետական մաշկային և սեռական ճանապարհով
փոխանցվող հիվանդությունների բժշկական կենտրոն**

Ֆուչիկի փողոց, 32, հեռ. 34-32-00

Ուռուցքաբանական գիտական ազգային կենտրոն

*ք. Երևան, Քանաքեռ, Ֆանարջյան 76,
հեռ. 28-69-62, 28-70-52*

Վնասվածքաբանության, օրթոպեդիայի,

այրվածքաբանության և ճառագայթաբանության կենտրոն

Մարաշ, 9-րդ փողոց, հեռ. 65-40-30, 65-00-40, 65-00-41

**ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ
ՖԻԶԻԿԱԿԱՆ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
Ց Ա Ն Կ**

Հայաստանի Հանրապետության բանակի և զինված ուժերի մարտունակության բարձրացման և առողջ անձնակազմով համալրելու համար ՀՀ Պաշտպանության նախարարի 07.05.2001թ. թիվ 322 հրամանով գործարկման մեջ է դրվել ՀՀ ՋՈՒ ռազմաբժշկական փորձաքննության կանոնակարգը:

Մեր գրքույկում հիվանդությունների անվանացուցակը ներկայացված է կրճատումներով: Ցանկում ընդգրկված են 2004 թ. կատարված փոփոխությունները:

Գրքույկում աստղանիշով նշված փոփոխությունները չեն վերաբերում տվյալ ցուցակին, քանի որ այնտեղ կատարված են բազմաթիվ փոփոխություններ:

Հիվանդությունների եւ ֆիզիկական թերությունների ցանկում նշված են ծառայության պիտանելիության կատեգորիաների մասին ծանոթություն.

Ա - պիտանի են

Բ - պիտանի են ոչ շարային ծառայության

Գ - պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության համար պատերազմական ժամանակ

Դ - տարկետում

Ե - պիտանի չեն և հանվում են զինվորական հաշվառումից

Հող-ված	Հիվանդությունների և ֆիզիկական թերությունների անվանումը	Ձինակ-չիկի ՁԾ պիտանելիության կարգը
1	2	3
	ՀՈԳԵԿԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ	
1	Մտավոր թերզարգացում ա) խիստ արտահայտված մտավոր թերզարգացման բոլոր ձևերը, բ) դեբիլություն. վերափորձաքննության ենթակա չեն, փոխանցվում են պահեստագոր (ՊՆ 16.01.04թ. թիվ 35 հրամանով)	 Ե Գ
2	Աֆեկտիվ պսիխոզներ ա) խիստ արտահայտված ձևեր՝ հիվանդության հաճախակի կրկնվող շրջաններով ձգձգվող նոպաներով բ) հազվադեպ նոպաներով՝ հոգեկան լիակատար առողջության երկարատև (մոտ մի քանի տարի) ընդմիջումներով. վերափորձաքննության ենթակա չեն, փոխանցվում են պահեստագոր (ՊՆ 16.01.04թ. թիվ 35 հրամանով)	 Ե Գ
3	Շիզոֆրենիա (մտազարություն)	Ե
4	Գանգուղեղի օրգանական հիվանդությունների, քրոնիկ ինտոքսիկացիաների վարակների հետևանքով առաջացած հոգեկան խանգարումներ ա) խիստ արտահայտված, հոգեկան կայուն խանգարումներով բ) չափավոր արտահայտված, հոգեկան կայուն խանգարումներով գ) օրգանական հիմք չունեցող թեթև կարճատև վիճակից լրիվ առողջացում դ) օրգանական հիմք չունեցող փսիխոտիկ վիճակներից լրիվ առողջացում (3 եւ ավելի տարի)	 Ե Գ Ա Բ

1	2	3
5	<p><i>Սոմատոզեն ծագման, ինչպես նաև սուր և քրոնիկ ինտոքսիկացիաների ժամանակ խանգարումներ</i></p> <p>ա) խիստ արտահայտված, հոգեկան կայուն խանգարումներով</p> <p>բ) չափավոր արտահայտված և երկարատև ասթենիկ վիճակի, անձի ախտաբանական փոփոխումներ՝ առանց նյարդային համակարգի օրգանական ախտահարման</p>	<p>Ե</p> <p>Գ</p>
6	<p><i>Անձի խանգարումներ</i></p> <p>ա) խիստ արտահայտված, կրկնվող և երկարատև դեկոմպենսացիաների միտումով</p> <p>բ) չափավոր արտահայտված. վերափորձաքննության ենթակա չեն, փոխանցվում են պահեստագոր (ՊՆ 16.01.04թ. թիվ 35 հրամանով)</p>	<p>Ե</p> <p>Գ</p>
7	<p><i>Ներոզներ, ադապտացիոն ռեակցիաներ (հարբեցողություն, թմրամոլություն, թունամոլություն)</i></p> <p>ա) հաճախակի դեկոմպենսացիաներով, ցայտուն և կայուն հիվանդագին արտահայտություններով</p> <p>բ) չափավոր արտահայտված, բայց երկարատև հիվանդագին արտահայտություններով</p> <p>գ) թեթև ու կարճատև հիվանդագին արտահայտություններով</p>	<p>Ե</p> <p>Գ</p> <p>Ա</p>
8	<p><i>Գանգոլեղի վնասվածքների հետեւանքով առաջացած հոգեկան խանգարումներ</i></p> <p>ա) խիստ արտահայտված հոգեկան խանգարումներով</p> <p>բ) չափավոր արտահայտված հոգեկան խանգարումներով</p>	<p>Ե</p> <p>Գ</p>

1	2	3
9	<p style="text-align: center;">ՆՅԱՐԳԱՅԻՆ ՀԱՍԱԿԱՐԳԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՎՆԱՍՎԱՅՔՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ</p> <p>Էպիլեպսիա (ընկճավորություն)</p> <p>ա) հաճախակի նուպաների կամ արտահայտված հոգեկան խանգարումներով</p> <p>բ) հազվադեպ նուպաների, նուպայից դուրս՝ չարտահայտված հոգեկան խանգարումներով</p> <p>գ) ըստ անամնեզի</p>	<p>Ե</p> <p>Գ</p> <p>Բ</p>
10	<p>Գանգուղեղի եւ ողնուղեղի անոթային հիվանդություններ</p> <p>ա) ֆունկցիաների խիստ խանգարումներով</p> <p>բ) ֆունկցիաների չափավոր խանգարումներով</p> <p>գ) ֆունկցիաների աննշան խանգարումներով կամ առանց ֆունկցիայի խանգարման</p>	<p>Ե</p> <p>Գ</p> <p>Ա</p>
11	<p>Կենտրոնական նյարդային համակարգի վարակիչ (մանրէական վիրուսային) և վարակիչ-ալերգիկ հիվանդությունների հետևանքներ, գանգուղեղի և ողնուղեղի օրգանական ախտահարումներ՝ վարակների, սուր և քրոնիկ ինտոքսիկացիաների ժամանակ</p> <p>ա) ֆունկցիաների խիստ արտահայտված խանգարումով կամ զարգացող ընթացքով</p> <p>բ) ֆունկցիաների չափավոր կամ ֆունկցիաների աննշան խանգարումով</p> <p>գ) առանց ֆունկցիաների խանգարման՝ առանձին օրգանական ցրված նշանների առկայությամբ</p> <p>դ) սուր հիվանդությունից հետո առանց օրգանական ախտահարման երեույթների</p>	<p>Ե</p> <p>Գ</p> <p>Ա</p> <p>Դ</p>

1	2	3
12	<p>Գանգուղեղի եւ ողնուղեղի վնասվածքների հետևանքներ</p> <p>ա) ֆունկցիաների խիստ խանգարումով բ) ֆունկցիաների չափավոր խանգարումով գ) ֆունկցիաների աննշան խանգարումով դ) վիճակ՝ սուր, փակ վնասվածքից հետո՝ առանց օրգանական ախտահարման երեւոյթների</p>	<p>Ե Գ Ա Դ</p>
13	<p>Կենտրոնական նյարդային համակարգի բնածին արատներ (զարգացման արատներ), օրգանական զարգացող հիվանդություններ, ինչպես նաեւ միոպաթիաներ, միասթենիա, մանկական ցերեբրալ կաթված և այլն</p> <p>ա) ֆունկցիաների խիստ խանգարումով կամ արագ զարգացող ընթացքով բ) ֆունկցիաների չափավոր կամ աննշան խանգարումով կամ դանդաղ զարգացող ընթացքով</p>	<p>Ե Գ</p>
14	<p>Պերիֆերիկ նյարդերի վնասվածքների հետևանքներով</p> <p>ա) ֆունկցիաների խիստ արտահայտված խանգարումով կամ արագ զարգացող ընթացքով բ) ֆունկցիաների չափավոր խանգարումով կամ դանդաղ զարգացող ընթացքով գ) ֆունկցիաների աննշան խանգարումներով և առանց ֆունկցիաների խանգարման դ) վիճակ՝ նյարդային խրճերի սուր վնասվածքից կամ վիրահատությունից հետո</p>	<p>Ե Գ Ա Դ</p>
15	<p>Պերիֆերիկ նյարդային համակարգի հիվանդություններ կամ դրանց հետևանքներ</p> <p>ա) ֆունկցիաների խիստ արտահայտված խանգարումով կամ արագ զարգացող ընթացքով բ) ֆունկցիաների չափավոր խանգարումով</p>	<p>Ե Գ</p>

1	2	3
	<p>կամ դանդաղ զարգացող ընթացքով</p> <p>զ) ֆունկցիաների աննշան խանգարումով եւ առանց ֆունկցիայի խանգարման</p> <p>դ) մնացորդային երևույթներ՝ սուր հիվանդություններից հետո</p>	<p>Ա</p> <p>Դ</p>
16	<p style="text-align: center;">ՆԵՐՔԻՆ ՕՐԳԱՆՆԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ</p> <p>Ֆիզիկական ինֆանտիլիզմ (թերզարգացում)</p> <p>ա) արտահայտվում է ֆիզիկական զարգացման անբավարար մակարդակով (մկանային համակարգը և ենթամաշկային ճարպաբջջանքը թույլ են զարգացած, կրծքավանդակը՝ նեղ է, քաշը՝ 45 կգ և պակաս, հասակը՝ 150սմ և ցածր)</p> <p>բ) մինչև 46 կգ և հասակը՝ մինչև 151 սմ</p>	<p>Դ</p> <p>Բ</p>
17	<p>Վիճակ՝ սուր վարակիչ, մակարուծային հիվանդություններից և ինտոքսիկացիաներից հետո՝ ֆունկցիաների ժամանակավոր խանգարումներով</p>	<p>Դ</p>
18	<p>Բուժման դժվար ենթարկվող քրոնիկ վարակիչ հիվանդություններ</p>	<p>Գ</p>
19	<p>Ներզատիչ համակարգ և նյութափոխանակության հիվանդություններ</p> <p>ա) ֆունկցիաների խիստ արտահայտված խանգարում</p> <p>բ) ֆունկցիաների չափավոր խանգարումով</p> <p>գ) ֆունկցիաների աննշան խանգարումով</p> <p>դ) վիճակ՝ սուր հիվանդություններից եւ վիրահատական միջամտություններից հետո՝ ֆունկցիաների ժամանակավոր խանգարում</p>	<p>Ե</p> <p>Գ</p> <p>Բ</p> <p>Դ</p>
20	<p>Արյան համակարգի հիվանդություններ (սակավարյունություն, ագրանուլոցիտոզ, հեմորլաստոզներ, հեմոսարկոմա, լիմֆոգրանուլեմատոզ, հեմոռագիկ դիաթեզներ և այլն)</p>	

1	2	3
	<p>ա) արագ և դանդաղ զարգացող պերիֆերիկ արյան կազմի զգալի փոփոխություններով և պարբերական սրացումներով</p> <p>բ) արյունաստեղծման ֆունկցիայի դանդաղ զարգացող, չափավոր խանգարումով և հազվադեպ սրացումներով</p> <p>գ) ստացիոնար բուժում չպահանջող, չափավոր արտահայտված երկրորդային սակավարյունություն, լեյկոպենիա, տրոմբոցիտոպենիա՝ ճառագայթային ու ցիտոստատիկ բուժումից հետո և այլն</p>	<p>Ե</p> <p>Գ</p> <p>Դ</p>
21	<p>Էկզոզեն սուր կամ քրոնիկ ինտոքսիկացիաների սրացումների կամ ազդեցությունների հետևանքներ, ալերգիկ հիվանդություններ</p> <p>ա) ֆունկցիաների խիստ խախտումով</p> <p>բ) ֆունկցիաների չափավոր խախտումով</p> <p>գ) սուր ինտոքսիկացիաներից և ազդեցություններից հետո ժամանակավոր ֆունկցիոնալ խանգարումներ, ստացիոնար բուժում չպահանջող մնացորդային երեւոյթներ</p> <p>դ) Էկզոզեն սուր ինտոքսիկացիաների, վարակների եւ այլ գործոնների ազդեցության հետևանքով առաջացած վիճակ</p>	<p>Ե</p> <p>Գ</p> <p>Դ</p> <p>Բ</p>
22	<p>Տուբերկուլոզ</p> <p>ա) ակտիվ զարգացող միկրոբակտերիայի արտազատմամբ կամ քայքայմամբ</p> <p>բ) ակտիվ առանց միկրոբակտերիայի արտազատման եւ քայքայման</p> <p>գ) ակտիվ մարող</p> <p>դ) ոչ ակտիվ</p>	<p>Ե</p> <p>Գ</p> <p>Գ</p> <p>Գ</p>
23	<p>Թորերի, շնչական ուղիների, պլերայի ոչ տուբերկուլոզային բնույթի քրոնիկ հիվանդություններ, զարգացման արատներ և սուր հիվանդություններից հետո կայուն մնացորդային երևույթներ</p>	

1	2	3
	<p>ա) ֆունկցիաների խիստ խանգարումով բ) ֆունկցիաների չափավոր խանգարումով գ) ֆունկցիաների աննշան խանգարումով և հազվադեպ նուպաներով հիվանդի ստացիոնար բուժում չպահանջող, սուր հիվանդությունների ժամանակավոր ֆունկցիոնալ մնացորդային երևույթներով վիճակ</p>	<p>Ե Գ Դ</p>
24	<p>Բրոնխային ասթմա ա) ծանր ձևեր՝ հաճախակի նուպաներով բ) միջին աստիճանի ծանրության ձևեր գ) թեթև աստիճանի ծանրության ձևեր՝ հազվադեպ նուպաներով դ) նուպաների բացակայություն վերջին 3 և ավելի տարիների ընթացքում</p>	<p>Ե Գ Գ Ա</p>
25	<p>Սրտմկանի, պերիկարդի (սրտապարկի), պսակաձև անոթների, փականային ապարատի, աորտայի հիվանդություններ և զարգացման արատներ ա) զգալի արտահայտված բ) չափավոր արտահայտված գ) աննշան արտահայտված դ) առանց օբյեկտիվ տվյալների առկայության ե) վիճակ՝ սիրտ-անոթային համակարգի սուր հիվանդություններից հետո, ինչպես նաև հիվանդի ստացիոնար բուժում չպահանջող ժամանակավոր բնույթ կրող արյան շրջանառության և սրտի որթմի խանգարումներից հետո</p>	<p>Ե Գ Գ Բ Դ</p>
26	<p>Հիպերտոնիկ հիվանդություն ա) 3-րդ շրջան բ) 2-րդ շրջան գ) 1-ին շրջան</p>	<p>Ե Գ Գ</p>
27	<p>Նեյրո-ցիրկուլյատոր և դիստոնիա (հիպերտենզիվ, հիպոտենզիվ, սրտային կամ խստոր ձևեր)</p>	

1	2	3
	<p>ա) կայուն խիստ արտահայտված վեգետատիվ-անոթային խանգարումներով և առիթմիայով</p> <p>բ) կայուն չափավոր արտահայտված խանգարումներով</p>	<p>Դ</p> <p>Բ</p>
28	<p>Պարբերական հիվանդություն</p> <p>ա) հաճախակի նուպաներով ներքին օրգանների ախտահարումով, ֆունկցիաների զգալի արտահայտված խանգարումով</p> <p>բ) հազվադեպ նուպաներով, առանց ներքին օրգանների ախտահարման ֆունկցիաների չափավոր խանգարումով</p>	<p>Ե</p> <p>Գ</p>
29	<p>Որովայնախոռոչի օրգանների հիվանդություններ և զարգացման արատներ</p> <p>ա) ֆունկցիաների զգալի խանգարումով</p> <p>բ) ֆունկցիաների չափավոր խանգարումով</p> <p>գ) ֆունկցիաների աննշան խանգարում</p>	<p>Ե</p> <p>Գ</p> <p>Բ</p>
30	<p>Երիկամների բորբոքային և դիստրոֆիկ հիվանդություններ</p> <p>ա) III-I աստիճանի քրոնիկ երիկամային անբավարարությամբ</p> <p>բ) I աստիճանի քրոնիկ երիկամային անբավարարությամբ կամ մեզի մեջ ախտաբանական փոփոխությունների առկայությամբ</p> <p>գ) վիճակ սուր վիրահատությունից հետո ստացիոնար բուժում չպահանջվող եւ ժամանակավոր բնույթ կրող ախտաբանական փոփոխությունների առկայությունը</p>	<p>Ե</p> <p>Գ</p> <p>Դ</p>
31	<p>Շարակցական հյուսվածքի համակարգային հիվանդություններ, այդ թվում՝ հողերի, մկանների, ջլերի վարակիչ, վարակիչ-ալերգիկ եւ դիստրոֆիկ հիվանդություններ</p> <p>ա) ֆունկցիաների խիստ խանգարումով, կայուն և արտահայտված փոփոխություններով</p>	<p>Ե</p>

1	2	3
	<p>բ) ֆունկցիաների չափավոր խանգարումով և հաճախակի սրացումներով</p> <p>գ) ֆունկցիաների աննշան խանգարումով և հազվադեպ սրացումներով</p> <p>դ) սուր հիվանդություններից հետո ստացիոնար բուժում չպահանջող մնացորդային երևույթներ</p>	<p>Գ</p> <p>Բ</p> <p>Դ</p>
32	<p>ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ</p> <p><i>Մաշկի սպիներ</i></p> <p>ա) հաճախակի խոցոտվող, շարժումներն զգալի չափով սահմանափակող կամ հագուստ, կոշիկ, հանդերձանք կրելուն զգալիորեն խանգարող</p> <p>բ) շարժումները չափավոր սահմանափակող կամ հագուստ, կոշիկ, հանդերձանք կրելուն չափավոր խանգարող. վերափորձաքննության ենթակա չեն, փոխանցվում են պահեստագոր (ՊՆ 16.01.04թ. թիվ 35 հրամանով)</p> <p>գ) շարժումներն աննշան սահմանափակող կամ հագուստ, կոշիկ, հանդերձանք կրելուն աննշան խանգարող</p> <p>դ) հիվանդության, վնասվածքի պատճառով կամ վիրահատությունից հետո չամրացած</p>	<p>Ե</p> <p>Գ</p> <p>Բ</p> <p>Դ</p>
33	<p><i>Կրծքավանդակի կամ որովայնախոռոչի, փոքր կոնքի կամ հետորովայնաձային տարածքի օրգանների վնասվածքների, վերքերի, վիրաբուժական միջամտությունների հետևանքներ</i></p> <p>ա) ֆունկցիաների խանգարում</p> <p>բ) ֆունկցիաների չափավոր խանգարումով</p> <p>գ) ֆունկցիաների աննշան խանգարումով</p> <p>դ) ստացիոնար բուժում չպահանջող, ֆունկցիայի ժամանակավոր խանգարումով</p>	<p>Ե</p> <p>Գ</p> <p>Բ</p> <p>Դ</p>
34	<p><i>Գանգի ոսկրերի վնասվածքների հետևանքներ, քնածին զարգացման արատներ՝ առանց կենտրոնական նյարդային համակարգի օրգանական ախտահարման նշանների</i></p>	

1	2	3
	<p>ա) օտար մարմին զանգի խոռոչում, զանգի կամարի ոսկրերի զգալի (20սմ² ավելի) արատ՝ փոխակալված պլաստիկ նյութով կամ 8սմ² ավելի, բայց պլաստիկ նյութով չփոխակալված. վերափորձաքննության ենթակա չեն, փոխանցվում են պահեստագոր (ՊՆ 16.01.04թ. թիվ 35 հրամանով)</p> <p>բ) զանգի ոսկրերի արատ մինչև 20 սմ² մակերեսով, փոխակալված պլաստիկ նյութով կամ մինչև ամուր շարակցահյուսվածքային սպիով՝ 8սմ² մակերեսով կամ պլաստիկ նյութով չփոխակալված</p>	<p>Ե</p> <p>Գ</p>
35	<p>Ողնաշարի և կրծքավանդակի հիվանդություններ, զարգացման արատներ, վնասվածքների և հիվանդությունների հետևանքներ</p> <p>ա) ֆունկցիաների զգալի խանգարումով</p> <p>բ) ֆունկցիաների չափավոր խանգարումով</p> <p>գ) ֆունկցիաների աննշան խանգարումով</p> <p>դ) օբյեկտիվ տվյալների առկայությամբ, առանց ֆունկցիայի խանգարման</p>	<p>Ե</p> <p>Գ</p> <p>Բ</p> <p>Ա</p>
36	<p>Չարգացման արատների, վնասվածքների և հիվանդությունների հետ կապված կոնքի ծովածություն կամ այլ ձեռափոխումներ</p> <p>ա) ֆունկցիաների խիստ խանգարումով</p> <p>բ) ֆունկցիաների չափավոր խանգարումով</p> <p>գ) ֆունկցիաների աննշան խանգարումով</p> <p>դ) կոնքի վնասվածքից հետո առանց ֆունկցիայի խանգարման</p>	<p>Ե</p> <p>Գ</p> <p>Բ</p> <p>Ա</p>
37	<p>Ոսկրերի, աճառների, մկանների, ջլերի ու հոդերի քրոնիկ բնածին արատներ, վնասվածքների հետևանքներ և քրոնիկ հիվանդություններ</p> <p>ա) ֆունկցիաների քրոնիկ խանգարումով</p> <p>բ) ֆունկցիաների չափավոր խանգարումով</p> <p>գ) ֆունկցիայի աննշան խանգարումով</p> <p>դ) հենաշարժողական ապարատի ֆունկցիայի ժամանակավոր խանգարում վնասվածքից կամ</p>	<p>Ե</p> <p>Գ</p> <p>Բ</p> <p>Դ</p>

1	2	3
38	<p>վիրահատությունից հետո, չամրացած ոսկրային կոշտուկ</p> <p>Հագուստ և կոշիկ կրելը դժվարացնող վերջույթի ծովածութիւն կամ կարճացում</p> <p>ա) ձեռքի կամ ոտքի՝ 8 սմ և ավելի կարճություն բ) ձեռքի՝ 5 սմ եւ ավելի կամ ոտքի 2 սմ և ավելի մինչեւ 5 սմ կարճություն, ոտքերի ծովածութիւն գ) ձեռքի մինչև 5 սմ կամ ոտքի մինչև 2 սմ կարճություն՝ առանց ֆունկցիայի խանգարման</p>	<p>Ե Գ Բ</p>
39	<p>Խոշոր հոդերի հին կամ սովորութային հոդախախտումներ անհաջող վիրահատության հետևանքով</p> <p>ա) հաճախակի՝ աննշան ֆիզիկական ծանրաբեռնվածության դեպքում բ) հազվադեպ՝ զգալի ֆիզիկական ծանրաբեռնվածությունից առաջացող</p>	<p>Բ Գ</p>
40	<p>Չոտքի մատների կամ դաստակների ձևախախտումներ և արատներ</p> <p>ա) ցանկացած 2 մատի բացակայություն՝ դաստակ ֆալանգայի հոդի մակարդակով, 1-ին կամ 2-րդ մատի բացակայության՝ դաստակ ֆալանգային հոդի մակարդակով. վերափորձաքննության ենթակա չեն, փոխանցվում են պահեստագոր (ՊՆ 16.01.04թ. թիվ 35 հրամանով) բ) III-V մատների եղունգային ֆալանգների բացակայություն, IV-V մատների բացակայություն՝ միջֆալանգային հոդերի մակարդակով, III, IV, V մատներից որևէ մեկի բացակայություն՝ դաստակաֆալանգային հոդի մակարդակով</p>	<p>Գ Բ Ա</p>
41	<p>Ոտքերի մատների արատներ</p> <p>ա) երկու ոտքի մատների բացակայություն կամ սերտաճում բ) քայլքը և կոշիկ կրելը չափավոր դժվարացնող ոտքերի մատների բացակայություն, անշար-</p>	<p>Գ Գ</p>

1	2	3
	<p>ծություն, ծովածություն կամ սերտածում. վերափորձաքննության ենթակա չեն, փոխանցվում են պահեստագոր (ՊՆ 16.01.04թ. թիվ 35 հրամանով)</p> <p>զ) նույն ինչ որ «բ» կետում քայլքը եւ կոշիկ կրելն աննշան աստիճանի դժվարացնող</p>	Բ
42	<p>Ոտնաթաթի ձևախախտում</p> <p>ա) խիստ արտահայտված անատոմիական փոփոխություններով</p> <p>բ) քայլքը զգալի խանգարումով</p> <p>գ) քայլքը չափավոր խանգարումով</p> <p>դ) քայլքն աննշան չափով խանգարումով</p>	Ե Գ Բ Ա
43	<p>Վերջույթի բացակայություն՝ ցանկացած մակարդակով</p>	Ե
44	<p>Խայիպ (զոք)</p> <p>ա) հարակից օրգանների ֆունկցիաների խանգարում առաջացնող</p> <p>բ) հագուստի կրելը դժվարացնող</p> <p>գ) հագուստի կրելը չդժվարացնող</p>	Գ Գ Բ
45	<p>Չարորակ նորագոյացություններ</p> <p>ա) ենթակա չեն արմատական հեռացման, ունեն հեռակա մետաստազներ</p> <p>բ) արմատական հեռացման հետևանքներ առանց մոտակա և հեռակա մետաստազների</p>	Ե Գ
46	<p>Բարորակ նորագոյացություններ</p> <p>ա) օրգանների ֆունկցիաների խիստ խանգարում առաջացնող կամ գլխի, մարմնի և վերջույթների շարժումներն զգալիորեն խանգարող</p> <p>բ) հագուստ կրելը դժվարացնող կամ օրգանների ֆունկցիաները չափավոր խանգարող</p> <p>գ) օրգանների ֆունկցիաներն աննշան աստիճանի խանգարող</p> <p>դ) բժշկական միջամտությունից հետո ֆունկցիաների ժամանակավոր խանգարումով</p>	Գ Գ Բ Դ

1	2	3
47	<p>Աորտայի, մագիստրալ անոթների հիվանդություններ և վնասվածքների հետևանքներ</p> <p>ա) արյան շրջանառության և օրգանների կամ վերջույթների ֆունկցիաների խիստ խանգարումով</p> <p>բ) արյան շրջանառության և օրգանների կամ վերջույթների ֆունկցիաների զգալի խանգարումով</p> <p>գ) արյան շրջանառության և օրգանների կամ վերջույթների ֆունկցիաների չափավոր խանգարումով</p> <p>դ) արյան շրջանառության և օրգանների կամ վերջույթների ֆունկցիաների աննշան խանգարումով</p> <p>ե) բժշկական միջամտությունից հետո ֆունկցիաների ժամանակավոր խանգարումով</p>	<p>Ե</p> <p>Գ</p> <p>Գ</p> <p>Բ</p> <p>Դ</p>
48	<p>Աճուկային, ազդրային, ստոծանու հետվիրահատական և այլ ճողվածքներ</p> <p>ա) կրկնվող կամ շատ մեծ քայլքը դժվարացնող կամ ներքին օրգանների ֆունկցիան զգալի խանգարող</p> <p>բ) միջին չափսերի քայլքը դժվարացնող կամ ներքին օրգանների ֆունկցիան չափավոր խանգարող</p> <p>գ) չափավոր մեծության քայլքը չդժվարացնող և ներքին օրգանների ֆունկցիան չխանգարող</p> <p>դ) բժշկական միջամտությունից հետո ֆունկցիաների ժամանակավոր խանգարումներով</p>	<p>Գ</p> <p>Գ</p> <p>Բ</p> <p>Դ</p>
49	<p>Ուղիղ աղիքի բոլոր շերտերի արտանկում</p> <p>ա) քայլքի ժամանակ և մարմնի ուղղահայց դիրք ընդունելիս</p> <p>բ) ֆիզիկական ծանրաբեռնվածության, դեֆեկացիայի ժամանակ</p>	<p>Ե</p> <p>Գ</p>
50	<p>Ոչ բնական հետանցք, կղանցքային խուղակ, հետանցքի նեղացում, սեղմամկանի անբավարարություն</p>	<p>Ե</p>

1	2	3
51	<p>Քրոնիկ պարասյրոկտիտ</p> <p>ա) կայուն կամ հաճախ բացվող խուղակներով, հաճախակի սրացումներով</p> <p>բ) ոչ կայուն կամ երբեմն բացվող խուղակներով, հազվադեպ սրացումներով</p> <p>գ) կրկնվող, սուր կրկնվող ընթացքով առանց արտաքին խուղակի առաջացման</p> <p>դ) բժշկական միջամտությունից հետո ֆունկցիաների ժամանակավոր խանգարումով</p>	<p>Ե</p> <p>Գ</p> <p>Բ</p> <p>Դ</p>
52	<p>Թուրք</p> <p>ա) հաճախակի արյունահոսություններով և երկրորդային սակավարյունությամբ</p> <p>բ) հանգույցների արտանկումով</p> <p>գ) հազվադեպ սրացումներով հիվանդի հաջող բուժման դեպքում</p> <p>դ) բժշկական միջամտությունից հետո ֆունկցիաների ժամանակավոր խանգարումով</p>	<p>Գ</p> <p>Բ</p> <p>Ա</p> <p>Դ</p>
53	<p>Միզասեռական համակարգի զարգացման արատներ, վնասվածքների կամ վիրահատությունների միջամտությունների հետևանքներ</p> <p>ա) ֆունկցիայի խիստ արտահայտված խանգարումով</p> <p>բ) ֆունկցիայի չափավոր խանգարումով</p> <p>գ) ֆունկցիայի աննշան խանգարումով</p> <p>դ) ժամանակավոր բնույթի, առանց ֆունկցիայի խանգարման ստացիանար բուժման կարիք չունեցող</p>	<p>Ե</p> <p>Գ</p> <p>Բ</p> <p>Ա</p>
54	<p>Գիշերամիզություն</p>	<p>Գ</p>
55	<p>Սերմալարի երակների վարիկոզային լայնացում</p> <p>ա) արյան շրջանառության խիստ խանգարումով և ցավային խիստ համախտանիշով</p> <p>բ) արյան շրջանառության չափավոր և աննշան խանգարումով</p>	<p>Գ</p> <p>Ա</p>

1	2	3
	<p>դ) բժշկական միջամտությունից հետո ֆունկցիաների ժամանակավոր խանգարումով</p>	Դ
56	<p>Ամորձու թաղանթների և սերմալարերի ջրզոդություն</p> <p>ա) խիստ արտահայտված քայլքը դժվարացնող</p> <p>բ) չափավոր արտահայտված</p> <p>գ) բժշկական միջամտությունից հետո ֆունկցիաների ժամանակավոր խանգարումով</p>	Գ Բ Դ
57	<p>Ամորձիների բացակայություն</p> <p>ա) երկու ամորձու տեղակայում որովային խոռոչում, աճուկային խողովակներում, դրանց արտաքին անցքերում կամ բացակայություն</p> <p>բ) մեկ ամորձու բացակայում, տեղակայություն որովային խոռոչում աճուկային խողովակում կամ դրա արտաքին անցքում</p> <p style="text-align: center;">ԱԿԱՆՁԻ, ՎԵՐԻՆ ՇՆՉԱՌԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ</p>	Գ Բ
58	<p>Քրոնիկ թարախային կամ մեզո - էպիտիմպաններ՝ երկկողմանի կամ միակողմանի</p>	Գ
59	<p>Վեստիբուլյար ապարատի ֆունկցիայի խանգարում</p> <p>ա) Մենյերի հիվանդության նշաններով ուղեկցվող, կայուն, խիստ արտահայտված վեստիբուլյար, վեգետատիվ խանգարումներ</p> <p>բ) ոչ կայուն հազվադեպ սրացող վեստիբուլյար, վեգետատիվ խանգարումներ և խիստ արտահայտված զգայունություն վեստիբուլյար գրգռիչների հանդեպ</p> <p>գ) կայուն և խիստ արտահայտված զգայունություն վեստիբուլյար գրգռիչների հանդեպ</p>	Ե Գ Ա

1	2	3
60	<p>Կայուն, լրիվ խլություն կամ խուլիամբություն ա) 2 ականջում կամ խուլիամբություն բ) մեկ ականջում</p>	<p>Ե Գ</p>
61	<p>Լսողության թուլություն ա) III (60-80db) կամ II (40-60db) աստիճանի ծանրալսություն, մեկ ականջում III, իսկ մյուս ականջում I (20-40db) կամ II աստիճանի ծանրալսություն բ) I (20-40db) աստիճանի ծանրալսություն 2 ականջում կամ 1 ականջում II, մյուսում՝ I աստիճանի ծանրալսություն, ինչպես նաև միակողմանի 3-րդ աստիճանի ծանրալսություն</p>	<p>Գ Բ</p>
62	<p>Ականջի կամ հարքթային խոռոչների բարոֆունկցիայի խիստ, կայուն խանգարում</p>	<p>Ա</p>
63	<p>Հարքթային խոռոչների քրոնիկ հիվանդություններ ա) պոլիպոզային կամ թարախային բ) ոչ թարախային</p>	<p>Գ Ա</p>
64	<p>Խիստ արտահայտված նեխած հարբուխ (օզենա)</p>	<p>Գ</p>
65	<p>Քրոնիկ դեկոմպենսացված (թունաալերգիկ) տոնզիլիտ</p>	<p>Ա</p>
66	<p>Խոսքի արատներ ա) խոսքային ամբողջ ապարատն ընդգրկող, բարձր աստիճանի կակազություն՝ շնչառության խանգարումով և արտահայտված նյարդային երևույթներով, խոսքն անհասկանալի դարձնող թվատություն բ) խոսքը ոչ լրիվ հասկանալի դարձնող չափավոր կակազություն կամ թվատություն գ) թույլ արտահայտված կակազություն</p>	<p>Գ Գ Բ</p>

1	2	3
67	<p><i>Ականջի և վերին շնչական ուղիների սուր վնասվածքներից, հիվանդությունների հետ վիրահատական հետևանքներ, երբ օրգանների ֆունկցիաները լիովին չեն վերականգնվել</i></p> <p style="text-align: center;">ԲԵՐԱՆԻ ԽՈՌՈՉԻ ԵՎ ԾՆՈՏՆԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ</p>	Դ
68	<p><i>Դիմաձևոտային հյուսվածքների և օրգանների բնածին ու ձեռքբերովի արատներ, ձևափոխումներ և հիվանդություններ</i></p> <p>ա) շնչառական, հոտառական, ծամելու, թքարտադրության ֆունկցիաների խիստ արտահայտված խանգարումով</p> <p>բ) շնչառական, հոտառական, ծամելու, թքարտադրության ֆունկցիաների չափավոր խանգարումներով</p> <p>գ) շնչառական, հոտառական, ծամելու, թքարտադրական ֆունկցիաների աննշան խանգարումով</p>	Ե Գ Բ
69	<p><i>Աղեւտիա (առաջնային, երկրորդային)</i></p> <p>ա) 10 կամ ավելի ատամների բացակայություն մեկ ծնոտի վրա կամ դրանց փոխարեն հանովի պրոտեզով, 8 սեղանատամի բացակայություն մեկ ծնոտի վրա, 4 սեղանատամի բացակայություն վերին ծնոտի վրա՝ մի կողմից և նույնքան սեղանատամի բացակայություն ստորին ծնոտի վրա՝ մյուս կողմից կամ դրանց փոխարեն հանովի պրոտեզով</p> <p>բ) 4 և ավելի ֆրոնտալ ատամների բացակայություն մի ծնոտի վրա կամ երկրորդ կտրիչ ատամի, ժանիքի և առաջին փոքր աղորիքի բացակայություն (կողք կողքի), երբ հնարավոր չէ դրանք փոխարինել մշտական պրոտեզով</p>	Գ Ա

1	2	3
70	<p>Ատամների, պարադոնտի և բերանի խոռոչի լորձաթաղանթի հիվանդություններ</p> <p>ա) բազմաթիվ ատամների զարգացած կարիես բ) պարոդոնտիտ, ընդհանուր պարոդոնտոզ գ) ստոմատիտ, գինգիվիտ, խեյլիտ և բերանի լորձաթաղանթի, թքագեղձի և լեզվի այլ հիվանդություններ, որոնք չեն բուժվում: Ընդհանուր միջին աստիճանի պարադոնտիտ, պարադոնտոզ դ) թեթև աստիճանի պարոդոնտիտ, պարոդոնտոզ</p>	<p>Գ Գ Գ Ա</p>
71	<p>Դիմաձևոտային վնասվածքների, հիվանդությունների և վիրահատությունների հետևանքներ</p> <p style="text-align: center;">ԱՉՔԻ ԵՎ ԴՐԱ ՀԱՎԵԼՈՒԿՆԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ</p>	<p>Դ</p>
72	<p>Կոպերի սերտաճում միմյանց կամ ակնագնդի հետ, որը խանգարում է աչքի շարժումներին կամ տեսողությանը. կոպերի ներարկում կամ թարթիչների ան դեպի ակնագունդը, որը գրգռում է աչքը. աչքի ֆունկցիան խանգարող կոպերի արտակում. կոպերի սպիական ձևափոխում կամ դիրքի անբավարարություն, որոնք խանգարում են եղջերենու փակմանը; կայուն լազոֆթալմ</p> <p>ա) երկու աչքի կոպերի դիրքի խիստ արտահայտված անբավարարվածություն (բացի պտոզից) բ) երկու աչքի վերին կոպերի զգալի իջեցում կամ կոպերի դիրքի այլ, խիստ արտահայտված արատներ մեկ աչքում կամ չափավոր արտահայտված երկու աչքում գ) մի աչքի վերին կոպի կայուն, չափավոր իջեցում կամ կոպի դիրքի այլ անբավարարություն մեկ աչքում՝ վիրահատական բուժման վերաբերյալ ցուցումների բացակայության դեպքում</p>	<p>Ե Գ Ա</p>

1	2	3
73	<p>Խիստ արտահայտված, հաճախակի սրացող խոցային բլեֆարիտներ, ինչպես նաև քրոնիկ կոնյուկտիվիտներ՝ պտկիկների գերաճով և հյուսվածքի ենթալորձային շերտի ինֆիլտրացիայով</p> <p>ա) չբուժվող բ) բուժելի</p>	<p>Գ Ա</p>
74	<p>Մեկ կամ երկու աչքի արցունքատար ապարատի հիվանդության պատճառով չընդհատվող արցունքահոսություն</p> <p>ա) չբուժվող բ) բուժվող</p>	<p>Գ Ա</p>
75	<p>Ակնագնդի շարժիչ նյարդի կայուն կաթված</p> <p>ա) դիպլոպիայով բ) առանց դիպլոպիայի: Ակնագնդի մկանների հստակ արտահայտված տատանվող սպազմ, փոխկապակցված կամ համակից շլուքյուն</p>	<p>Գ Ա</p>
76	<p>Տեսողության ֆունկցիան խախտող ծիածանաթաղանթի, եղջերաթաղանթի և աչքի այլ թաղանթների բորբոքային կամ դեգեներատիվ քրոնիկ հիվանդություններ</p> <p>ա) երկու աչքի տեսողական ֆունկցիայի խիստ արտահայտված հետզհետե անկումով կամ հաճախակի սրացումներով բ) նույնը՝ մեկ աչքում գ) երկու կամ մեկ աչքում չափավոր արտահայտված, կայուն, հազվադեպ սրացումներով</p>	<p>Ե Գ Ա</p>
77	<p>Ակոմոդացիայի սպազմ կամ կաթված</p> <p>ա) կայուն՝ անարդյունավետ բուժումից հետո բ) բուժելի</p>	<p>Գ Ա</p>
78	<p>Մեկ կամ երկու աչքի աֆակիա կամ արտիֆակիա</p> <p>վերափորձաքննության ենթակա չեն, փոխանցվում են պահեստագոր (ՊՆ 16.01.04թ. թիվ 35 հրամանով)</p>	<p>Գ</p>

1	2	3
79	Բորբորային կամ դիստրոֆիկ փոփոխություններ չառաջացնող օտար մարմին աչքի ներսում	Գ
80	Գլաուկոմա ա) զարգացող եւ հետագա փուլերում երկու աչքում տարածվող բ) նույնը՝ մեկ աչքում գ) սկզբնական շրջանում, նախազլաուկոմայի և հիպերտենզիայի շրջանում	Ե Գ Գ
81	Ցանցաթղանթի շերտազատում ա) ցանկացած բնույթի՝ երկու աչքում բ) ցանկացած բնույթի՝ մեկ աչքում	Ե Գ
82	Տեսողական նյարդի ցանկացած էթիոլոգիայի ապաճում տեսողական ֆունկցիայի հետզհետե նվազման դեպքում ա) երկու աչքում բ) մեկ աչքում	Ե Գ
83	Տեսողության թուլություն՝ կապված բեկող միջավայրերի կամ ակնհատակի կայուն փոփոխությունների, ռեֆրակցիայի անոմալիայի կամ այլ պատճառների (վնասվածքներ, օրգանական հիվանդություններ և այլն) հետ ա) ակնազնդի բացակայություն կամ կույրություն կամ մեկ աչքի տեսողությունը 0.5 է և ցածր, իսկ մյուս աչքինը՝ 0.4-ից ցածր կամ երկու աչքերի տեսողությունը 0.3-ից ցածր է բ) նույնը ինչ որ «ա» կետում, երբ մյուս աչքի տեսողությունը 0.4 է և ավելի կամ մեկ աչքում տեսողությունը 0.3 է, երբ մյուսինը՝ 0.3-0.6 է գ) մեկ աչքի տեսողությունը 0.4 է, իսկ մյուսինը՝ 0.3-0.6, մեկ աչքի տեսողությունը 0.5 է և ավելի, իսկ մյուս աչքինը՝ 0.6-0.9	Ե Գ Բ
84	Ռեֆրակցիայի անոմալիաներ ա) մեկ աչքի կարճատեսություն կամ հեռատե-	Ե

1	2	3
	<p>սուրբուն՝ որևէ առանցքով՝ 12.0 D-ից ավելի</p> <p>բ) մեկ աչքի որևէ առանցքով կարճատեսություն 6.0-12.0D կամ հեռատեսություն՝ 7.0D-12.0D կամ 2 աչքի հեռատեսություն 6.5 D</p> <p>գ) մեկ աչքի կարճատեսություն որևէ առանցքով 3.0-5.5D, կամ հեռատեսություն մեկ աչքի որևէ առանցքով՝ 5.0-7.0 D</p> <p>դ) 2 աչքի ցանկացած տեսակի աստիգմատիզմ՝ 2 գլխավոր առանցքների միջև 6.0 D-ից ավելի ռեֆրակցիայի տարբերությամբ</p> <p>ե) 2 աչքի ցանկացած տիպի աստիգմատիզմ՝ 2 գլխավոր առանցքների միջև՝ ռեֆրակցիայի տարբերությամբ՝ 3.5-6.0D կամ 1 աչքում՝ 4.0D և ավելի</p> <p>զ) զույգ աչքերի ցանկացած տիպի աստիգմատիզմ՝ 2 գլխավոր առանցքների միջև՝ ռեֆրակցիայի տարբերությամբ մինչև 3.0 D</p>	<p>գ</p> <p>ւ</p> <p>ե</p> <p>գ</p> <p>ւ</p>
85	<p><i>Դիֆուրմազիա կամ անոմալ տրիֆուրմազիա A, B, C տիպերի</i></p>	<p>ւ</p>
86	<p><i>Աչքի ֆունկցիայի ժամանակավոր խանգարումներ</i></p>	<p>դ</p>
87	<p style="text-align: center;">ՄԱՇԿԻ ԵՎ ԵՆԹԱՄԱՇԿԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ</p> <p><i>Մաշկի քրոնիկ դժվար բուժվող և չբուժվող հիվանդություններ</i></p> <p>ա) էկզեմայի, նեյրոդերմիտի տարածված ձևեր, բնածին իխթիոզ, իխթիոզանման էրիթրոդերմիա, իսկական բշտախտ (հասարակ, գերաճական, թերթաձև և այլն)</p> <p>բ) ռեցեսիվ իխտիոզ, տարածված փտորիազ, տարածված թարախակույտային և խոցային պիոդերմիա, վիտիլիգոյի մազաթափության տարածուն ձևեր, էկզեմայի, նեյրոդերմիտի, փտորիազի սահմանափակ, բայց հաճախակի սրացող ձևեր, սկավառակային (դիսկոիդ) կարմիր գայլախտ, Դ-յուրինգի դերմատիտ</p>	<p>ե</p> <p>գ</p>

1	2	3
	գ) մաշկի բաց տեղամասերի սահմանափակ (օջախային) էկզեմա, նեյրոդերմիտ, փսորիազ, պիտրիազիս՝ սրացման շրջանում	Դ
	դ) մաշկի, բաց տեղամասերի սահմանափակ էկզեմա, նեյրոդերմիտ, փսորիազ, պիտրիազ, վիտիլիգո (բուժումից հետո)	Բ
88	Շարակցական հյուսվածքի տարածուն հիվանդություններ մաշկային ծածկույթի ախտահարման գերակայությամբ, դերմատոմիոզիտ, սիստեմային կարմիր՝ գալլախտ, տարածված սկլերոդերմիա	Ե
89	Տարածված կամ զգալի արտահայտված գերեղջրացումներ, դիսկերատոզներ, մաշկի նախաքաղցկեղային վիճակներ, ռենոգեն- և ռադիոմաշկաբորբեր, ֆոտոդերմատիտներ, օնխոլոգիստրոֆիա	Գ
90	Մաշկի տարածված սուր հիվանդություններ, այդ թվում՝ վարակիչ, ինչպես նաև սուր էկզեմա, բուժամաշկաբորբեր և մաշկաբորբեր	Դ
91	Բոր	Ե
92	Մաշկի և դրա հավելուկների սնկային հիվանդություններ (զոնջ, միկոսպորիա, տրիխոֆիթիա)	Դ
	ՍԵՌԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ ՓՈԽԱՆՑՎՈՂ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
93	Սուր և քրոնիկ միզուկաբորբեր (անկախ էթիոլոգիայից), արտաքին սեռական օրգանների վիրուսային և մանրէական ախտահարումներ (հերպես, սրածայր կոնդիլոմաներ, շանկրանման պիտրիազ)	Դ
94	Միֆիլիս ա) առաջնային, երկրորդային բ) երրորդային, բնածին	Դ Գ
95	Մարդու իմունային անբավարարության վիրուսակիրներ (ՄԻԱՎ) և ձեռքբերովի իմունային անբավարարությամբ հիվանդություններ (ՉԻԱՀ)	Ե

3. ՊԱՏԱՆԻՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության գործող սահմանադրությամբ յուրաքանչյուր քաղաքացի ունի

- կրթության իրավունք.
 - տարկետման իրավունք՝ ժամկետային զինվորական ծառայության գորակոչից ուսումը շարունակելու նպատակով.
 - տարկետման իրավունք՝ ժամկետային զինվորական ծառայության գորակոչից պետական գիտակրթական համակարգի ասպիրանտուրայում, օրդինատուրայում, ինտերնատուրայում կամ մագիստրատուրայում ուսումը շարունակելու նպատակով:
- (ՀՀ Սահմ., գ.2. հ.35)*

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Ըստ ՀՀ Սահմանադրության 35-րդ հոդվածի

- Յուրաքանչյուր քաղաքացի ունի կրթության իրավունք:
- Յուրաքանչյուր քաղաքացի ունի պետական ուսումնական հաստատություններում մրցութային հիմունքներով անվճար բարձրագույն և այլ մասնագիտական կրթություն ստանալու իրավունք:

Ըստ զինապարտության մասին ՀՀ օրենքի

Պարտադիր զինվորական ծառայության գորակոչից ուսումը շարունակելու համար տարկետում ստանալը

1. Պարտադիր զինվորական ծառայության գորակոչից ուսումը շարունակելու համար տարկետում տրվում է՝

* ա) պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների (այդ թվում՝ օրդինատուրա, ինտերնատուրա և մագիստրա-

տուրա) ցերեկային ուսուցման ուսանողներին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած ցանկում ընդգրկված միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների ցերեկային ուսուցման ուսանողներին.

բ) պետական գիտակրթական համակարգի ասպիրանտուրայում սովորողներին.

գ) պետական պատվերով, միջպետական և միջգերատեսչական համաձայնագրերով օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներին, օրդինատուրայում, ինտերնատուրայում, մագիստրատուրայում կամ ասպիրանտուրայում սովորողներին:

2. Ասպիրանտուրա և մագիստրատուրա ընդունվելու կարգն ու պայմանները հաստատվում են կառավարության որոշմամբ:

* Ատենախոսություն պաշտպանած, բայց ԲՈՀ-ի հաստատումը դեռ չստացած եւ ասպիրանտուրան ավարտած ու ատենախոսության պաշտպանության օրը պաշտոնապես նշանակված անձանց պարտադիր զինվորական ծառայության գորակոչվելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3. Անբավարար առաջադիմության կամ անկարգապահության համար բարձրագույն կամ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններից հեռացված կամ երկրորդ անգամ նույն կուրսում մնացած 18 տարին լրացած անձինք, ինչպես նաև սույն օրենքի 13 կամ 15 հոդվածներով չնախատեսված հիմքերով ուսման տարկետում ստացած անձինք կորցնում են կրթությունը շարունակելու համար պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում ստանալու իրավունքը:

4. * Կրթությունը շարունակելու համար պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում ստացած անձինք պարտադիր զինվորական ծառայության են կանչվում մինչեւ 27 տարեկան դառնալը:

Պետական գիտակրթական համակարգի ասպիրանտուրայում պետական պատվերով սովորողները, եթե նրանք ուսումն ավարտում են 27 տարեկանից բարձր տարիքում, պարտադիր զինվորական ծառայության են կանչվում ասպիրանտուրան ավարտելուց հետո:

(ՀՀ Օրենքը ՁՄ, գ.4, հ.14)

Համաձայն ՀՀ ՁՄ օրենքի գ. 4, հ. 14-ի ուսումը շարունակելու համար պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տար-կետում տրվում է՝

- ՀՀ պետական բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների ցերեկային ուսուցման ուսա-նողներին:

* Այդ հաստատությունների ցանկը հաստատված է ՀՀ կառա-վարության 1996 թ. հոկտեմբերի 10-ի թիվ 330 որոշմամբ:

**ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՉՈՐԱԿՈՉԻ
ՏԱՐԿԵՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ՕԳՏՎՈՒՄ ԵՆ
ՆԵՐՔՈՂՅԻՇՅԱԼ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ԵՎ
ՄԻՋՆԱԿԱՐԳ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԵՐԵԿԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ**

Երևանի պետական համալսարան

այդ թվում՝

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ

Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան

այդ թվում՝

Հայաստանի պետական ճարտարագիտական համալսա-րանի Գյումրիի մասնաճյուղ

Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Վանաձորի մասնաճյուղ

Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Գորիսի մասնաճյուղ

Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Կապանի մասնաճյուղ

Երևանի ճարտարապետաշինարարական պետական համալ-սարան

Երևանի տնտեսագիտական ինստիտուտ

այդ թվում՝

Երևանի տնտեսագիտական ինստիտուտի Գյումրիի մասնաճյուղ

Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարան

Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան

Գյումրիի Մ. Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտ

Գավառի տարածաշրջանային պետական համալսարան

Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան մանկավարժական ինստիտուտ

Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիա

այդ թվում՝

Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի Գյումրիի մասնաճյուղ

Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա

այս թվում՝

Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի Գյումրիի մասնաճյուղ

Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ

այդ թվում՝

Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի Գյումրիի մասնաճյուղ

Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան

Հայկական գյուղատնտեսական ակադեմիա

Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ

Հայ-ռուսական (սլովոնական) համալսարան

«Ֆրանսիական համալսարան» ՓԲԸ

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության բարձրագույն դպրոց

Երևանի պարարվեստի ուսումնարան

Երևանի օլիմպիական հերթափոխի հանրապետական և Գյումրիի օլիմպիական հերթափոխի ուսումնարաններ

Ինչպես նաև

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հոգևոր ճեմարանի, Արարատյան Հայրապետական թեմի դպրանոցի և Շիրակի թեմի ընծայարանի սաները:

Ուսուցումը պաշտպանական բնույթի մարզատեխնիկական կազմակերպություններում

Նախագորակոչիկները զինվորական մասնագիտությունների ծրագրով զինվորական ծառայության նախնական պատրաստություն են անցնում պաշտպանական բնույթի մարզատեխնիկական կազմակերպություններում՝ զինվորական կոմիսարիատի ընտրությանը և ուղեգրով:

(ՀՀ օրենքը ՁՄ, գ. 3, հ. 9)

Ուսուցումը ռազմաուսումնական հաստատություններում

1. Ռազմաուսումնական հաստատությունների ընդունելության կարգը հաստատում է կառավարությունը:

Ժամկետային զինվորական ծառայություն անցած կամ անցնող քաղաքացիները ռազմաուսումնական հաստատություններ կարող են ընդունվել մինչև 23 տարին լրանալը:

2. Ռազմական ուսումնական հաստատություններ ընդունված

քաղաքացիները համարվում են պարտադիր զինվորական ծառայության զինձառայողներ, օգտվում են օրենսդրությամբ նրանց համար սահմանված իրավունքներից ու արտոնություններից եւ կրում պարտականություններ՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Այդ հաստատություններից ազատված եւ հեռացված անձինք **փոխհատուցում են իրենց ուսման հետ կապված ծախսերն** ու գորակոչվում (ուղարկվում) են պարտադիր զինվորական ծառայության՝ ընդհանուր հիմունքներով: Ջինվորական ծառայության ժամկետում տվյալ դեպքում հաշվարկվում է միայն առողջական վիճակի պատճառով ազատված անձանց ուսման եւ զինվորական ծառայության ընթացքում ռազմաուսումնական հաստատություններ ընդունված քաղաքացիների նախկինում ծառայած ժամանակաշրջանը:

(ՀՀ օրենքը ՁՄ, գ. 3, հ. 10)

ԻՆՉՊԵՍ ՊԱՇՏՊԱՆՆԵԼ ՍԵՓԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Եթե Դուք սովորում եք կամ արդեն ստացել եք բարձրագույն կրթություն և ունեք տարկետման իրավունք

Գ Ո Ր Ծ Ե Թ Հ Ե Տ Ե Վ Յ Ա Լ Կ Ե Ր Պ

1. Պատրաստեք համապատասխան փաստաթղթերը և դրանց պատճենները:

Դա պետք կգա, եթե փորձեն Ձեզ ուժով գորակոչել և դա արեք նախօրոք:

2. Սպասեք տեղական (տարածքային) ՋՀ ծանուցագրին:

3. ՋՀ ներկայացրեք դիմում Ձեր ուսման ընթացքում տարկետում տալու մասին:

4. Ներկայացեք տեղական (տարածքային) ՋՀ և հասեք նրան, որ այն ընդունի որոշում (ցանկացած), և նրա նախագահը Ձեզ հանձնի որոշման պատճենը:

5. Եթե որևէ հակաօրինականության պատճառով տեղական (տարածքային) ՉՀ հրաժարվի ուսանողին կամ ասպիրանտին տարկետում տալուց, Դուք ունեք իրավունք բողոքարկելու այդ որոշումը մեկ ամսվա ընթացքում՝

* կամ հանրապետական գորակոչային հանձնաժողով

* կամ դատարան

Ստաջին ղեպքում դիմում-բողոքն ուղարկում եք հանրապետական ՉՀ ընդդեմ տեղական (տարածքային) ՉՀ-ի որոշման:

Այդ ընթացքում տեղական (տարածքային) ՉՀ որոշման կատարումը, մինչև դրա վերանայումը, չի կասեցվում:

Երկրորդ ղեպքում դիմում-բողոքը ներկայացնում եք Ձեր բնակության վայրի դատարան:

Այդ ընթացքում տեղական (տարածքային) ՉՀ որոշման կատարումը, մինչև դրա վերանայումը, չի կասեցվում:

Համաձայն «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և գանգատները քննարկելու կարգի մասին» ՀՀ օրենքի՝ թույլ է տրվում Ձեզ բողոքարկել ցանկացած պաշտոնատար անձանց, պետական, հասարակական և մյուս մարմինների գործողությունները:

Պետք է հիշել, որ տեղական (տարածքային) հանձնաժողովի որոշման վերաբերյալ գորակոչիկի կամ այլ անձանց բողոքը, մինչև դրա վերանայումը, չի կասեցնում որոշման կատարումը:

6. Սպասեք հանրապետական ՉՀ ծանուցագրին, ենթարկվեք բուժզննման և ներկայացեք ու ստացեք որոշումը:

Եթե Դուք ազատվել եք գորակոչից կամ ստացել եք տարկետում, ձևակերպեք փաստաթղթերը տեղական (տարածքային) զինկոմիսարիատում:

7. Եթե Դուք համաձայն չեք հանրապետական ՉՀ որոշմանը, գանգատարկեք այդ որոշումը ձեր տեղական (տարածքային) դա-

տարան մեկ ամսվա ընթացքում:

Այդ ընթացքում տեղական (տարածքային) հանձնաժողովի որոշումը, մինչև դրա վերանայումը, չի կասեցվում:

9. Յանկացած տեղական (տարածքային) դատարանի որոշման դեմ կարելի է վճռաբեկ գանգատ ներկայացնել վերադաս դատարան:

Հարկ է նկատել, որ դատարանի որոշումը ուժի մեջ է մտնում և պետք է իրականացվի որոշման ընդունումից 15 օր (կամ մեկ ամիս) անց:

Եթե գործի առումով ներկայացված է վճռաբեկ գանգատ կամ դատախազի կողմից տրված է վճռաբեկ բողոք, ապա տեղական (տարածքային) դատարանի որոշումն ուժի մեջ է մնում, եթե վերադաս դատարանն այն թողել է ուժի մեջ: Համաձայն «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և գանգատները քննարկելու կարգի մասին» ՀՀ օրենքի 9-րդ կետի՝ դիմումներին ու գանգատներին ընթացք են տալիս հարցն ըստ էության լուծելու պարտավոր են պետական, հասարակական մարմնում, ձեռնարկությունում, հիմնարկում, կազմակերպությունում դրանք ստացվելուց հետո մինչև մեկ ամսվա ժամկետում, իսկ լրացուցիչ ուսումնասիրություն և ստուգում չպահանջող դիմումներն ու գանգատները՝ 15 օրից ոչ ուշ:

Վերադաս դատարանի կողմից գանգատը մերժվելու կամ նախկին որոշումը ուժի մեջ թողնելու դեպքում Գ-ուք կարող եք դիմել ՀՀ գլխավոր դատախազին կամ նրա տեղակալներին, ովքեր կարող են դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշումները բողոքարկել հսկողական կարգով:

Ձեր օրինական իրավունքները պաշտպանելիս հետևեք «Ուշադրություն» բաժնում շարադրված կանոններին:

4. ՊԱՏԱՆԻՆ ԵՎ ՆՐԱ ԿԵՆՍԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պարտադիր զինվորական ծառայության գորակոչից ընտանեկան դրության բերումով ազատվելու և տարկետում ստանալու իրավունք

Համաձայն ՀՀ ՁՄ օրենքի

Պարտադիր զինվորական ծառայության գորակոչից ընտանեկան դրության բերումով տարկետում ստանալը

1. Պարտադիր զինվորական ծառայության գորակոչից ընտանեկան դրության բերումով տարկետում տրվում է այն գորակոչիկին, որն ունի՝

ա) անաշխատունակ հայր և մայր կամ միայնակ անաշխատունակ հայր կամ մայր, եթե նրանք չունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացի համարվող աշխատունակ, պարտադիր զինվորական ծառայության մեջ չգտնվող այլ զավակ:

Անաշխատունակ ծնողներ են՝

- ծերության կենսաթոշակի իրավունք տվող տարիքի հասած հայրը և մայրը,

- առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ հայրը և մայրը,

- դատարանի վճռով անգործունակ ճանաչված հայրը և մայրը.

բ) առանց մոր մեծացող երեխա.

գ) երկու և ավելի երեխա.

դ) առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ կին.

ե) մինչև 18 տարեկան կամ 18 տարեկանից բարձր, բայց առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ կամ դատարանի վճռով անգործունակ ճանաչված հարազատ քույր կամ եղբայր, եթե չկա նրա հետ բնակվող ընտանիքի անդամ համարվող աշխատունակ այլ անձ:

* Չորակոչիկին տարկետում տրվում է նաեւ վերջինիս կնոջ՝ 2-րդ երեխայով կամ զույգ երեխայով վեցամսյա հղիության դեպքում:

2. Եթե քաղաքացին մինչև գորակոչային տարիքի հասնելն առնվազն 5 տարի եղել է որդեգրված, կամ ծնողներն ամուսնալուծվել

են առնվազն 5 տարի առաջ, և կան սույն հոդվածով նախատեսված պայմաններից որևէ մեկը, ապա նա օգտվում է պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում ստանալու իրավունքից:

3. Պարտադիր զինվորական ծառայության գորակոչից սույն օրենքով չնախատեսված դեպքերում ընտանեկան դրության բերումով տարկետում տալու մասին որոշումն ընդունում է պաշտպանության նախարարը՝ հանրապետական գորակոչային հանձնաժողովի եզրակացության առկայության դեպքում:

4. Սույն օրենքով նախատեսված դեպքերում գորակոչիկին տարկետում տրվում է մինչև նրա 27 տարեկան դառնալը: Եթե մինչև 27 տարեկան դառնալը նա չի կորցնում տարկետում ստանալու իրավունքը, ապա խաղաղ ժամանակ ազատվում է պարտադիր զինվորական ծառայությունից և հաշվառվում պահեստագրում, բացառությամբ սույն օրենքի 14 հոդվածի 4-րդ կետով նախատեսված դեպքի:

(ՀՀ Օրենքը ՁՄ, գ. 4, հ.13)

Պարտադիր զինվորական ծառայության գորակոչից այլ հիմքերով տարկետում ստանալը

1. Ազգային ժողովի պատգամավորներին, իրենց լիազորությունների ողջ ժամկետում, տրվում է պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում ստանալու իրավունք:

2. Առանձին դեպքերում կառավարությունը որոշում է քաղաքացիների կատեգորիաները եւ առանձին քաղաքացիներին, որոնց տարկետում է տրվում պարտադիր զինվորական ծառայության գորակոչից:

(ՀՀ օրենքը ՁՄ, գ. 4, հ. 16)

3. Մինչև Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունն ընդունելն օտարերկրյա պետությունների զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայություն անցած քաղաքացին:

(ՀՀ օրենքը ՁՄ, գ. 4, հ. 12)

ԻՆՉՊԵՍ ՊԱՇՏՊԱՆՆԵԼ ՍԵՓԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Եթե Ձեր ընտանեկան պայմանները համապատասխանում են ՁՄ օրենքի 23, 24 հոդվածներին, ապա Դուք իրավունք ունեք զին-
ծառայությունից ազատվելու կամ տարկետում ստանալու:

ԳՈՐԾԵՔ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԵՐՊ

1. Պատրաստեք համապատասխան փաստաթղթերը և դրանց պատճենները:

2. Սպասեք տեղական (տարածքային) ՁՀ ծանուցագրին:

3. ՁՀ ներկայացրեք դիմում Ձեր տարկետման վերաբերյալ:

4. Ներկայացեք ՁՀ և հասեք նրան, որ այն ընդունի որոշում (ցանկացած) և նրա նախագահը Ձեզ հանձնի այդ որոշման պատ-
ճենը:

5. Եթե նարգային (տարածքային) ՁՀ ընդունել է որոշում Ձեր գո-
րակոչման վերաբերյալ, Դուք իրավունք ունեք բողոքարկել այդ ո-
րոշումը մեկ ամսվա ընթացքում

* կամ հանրապետական ՁՀ

* կամ դատարան

Առաջին դեպքում դիմում-բողոքն ուղարկում եք հանրապետա-
կան գորակոչային հանձնաժողով ընդդեմ տեղական (տարածքա-
յին) գորակոչային հանձնաժողովի որոշման:

Այդ ընթացքում տեղական (տարածքային) ՁՀ որոշման կա-
տարումը, մինչև դրա վերանայումը, չի կասեցվում:

(ՀՀ օրենքը ՁՄ, գ. 4, հ. 18)

Երկրորդ դեպքում դիմում-բողոքը ներկայացնում եք Ձեր բնա-
կավայրի դատարան:

Այդ ընթացքում տեղական (տարածքային) ՁՀ որոշման կատա-
րումը, մինչև դրա վերանայումը, չի կասեցվում:

(ՀՀ օրենքը ՁՄ, գ. 4, հ. 18)

Պետք է հիշել, որ տեղական (տարածքային) հանձնաժողովի ո-
րոշման վերաբերյալ գորակոչիկի կամ այլ անձանց բողոքը, մինչև

դրա վերանայումը, չի կասեցնում որոշման կատարումը:

(ՀՀ օրենքը ՁՄ, գ. 4, հ.18)

6. Ստանալով հանրապետական ՁՀ ծանուցագիրը՝ ներկայացնեք և ստացեք որոշումը: Եթե Դուք ազատվել եք գորակոչից կամ Ձեզ տրվել է տարկետում, ձևակերպեք Ձեր փաստաթղթերը տեղական (տարածքային) ՁԿ-ում:

7. Եթե Դուք համաձայն չեք հանրապետական ՁՀ-ի որոշման հետ՝ բողոքարկեք այն տեղական (տարածքային) դատարանում մեկ ամսվա ընթացքում:

Այդ ընթացքում տեղական (տարածքային) հանձնաժողովի որոշման կատարումը, մինչև դրա վերանայումը, չի կասեցվում:

(ՀՀ օրենքը ՁՄ, գ. 4, հ. 18)

8. Ցանկացած տեղական (տարածքային) դատարանի որոշման դեմ կարելի է վճռաբեկ գանգատ ներկայացնել հանրապետական դատարան:

Հարկ է նկատել, որ դատարանի որոշումը ուժի մեջ է մտնում և կարող է կիրարկվել ոչ ուշ, քան դատարանի ընդունած որոշումից 15 օր (կամ մեկ ամիս) անց:

Եթե գործի վերաբերյալ ներկայացված է վճռաբեկ գանգատ կամ դատախազի կողմից տրված է վճռաբեկ բողոքագիր, ապա տեղական (տարածքային) դատարանի որոշումը ուժի մեջ է մտնում միայն վճռաբեկ գանգատի քննարկումից հետո և եթե միայն վճռաբեկ մարմինների կողմից այն մնացել է ուժի մեջ:

Ձեր օրինական իրավունքները պաշտպանելիս հետևեք «Ուշադրություն» բաժնուժ շարադրված կանոններին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ընդունվել է 17.12.2003

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության քաղաքացու կողմից պարտադիր զինվորական ծառայությունն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև սահմանում է այլընտրանքային ծառայության գորակոչ կազմակերպելու և անցկացնելու կարգը:

ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Այլընտրանքային ծառայության մասին օրենսդրությունը

Այլընտրանքային ծառայության մասին օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերից, սույն օրենքից, այլ օրենքներից և իրավական ակտերից:

Հոդված 2. Այլընտրանքային ծառայության հասկացությունը և տեսակները

1. Սույն օրենքի իմաստով այլընտրանքային է համարվում ժամկետային պարտադիր զինվորական ծառայությանը փոխարինող ծառայությունը, որը կապված չէ զենք կրելու, պահելու, պահպանելու և օգտագործելու հետ ու իրականացվում է ինչպես զինվորական, այնպես էլ քաղաքացիական հիմնարկներում:

2. Այլընտրանքային ծառայության տեսակներն են՝

ա) այլընտրանքային զինվորական՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերում իրականացվող մարտական հերթապահության, զենք կրելու, պահելու, պահպանելու և օգտագործելու հետ չկապված զինվորական ծառայություն:

բ) այլընտրանքային աշխատանքային՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերից դուրս իրականացվող աշխատանքային ծառայություն:

3. Այլընտրանքային ծառայության նպատակը Հայրենիքի եւ հասարակության առջեւ քաղաքացիական պարտքի կատարման ապահովումն է եւ չունի պատժի, անձի պատվի եւ արժանապատվության նվաստացման բնույթ:

Հոդված 3. Այլընտրանքային ծառայություն անցնելու հիմքը

1. Այլընտրանքային ծառայության կարող է անցնել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որի կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում են ռազմական ստորաբաժանումներում զինվորական ծառայություն անցնելը, ինչպես նաեւ գեներ կրելը, պահելը, պահպանելը եւ օգտագործելը:

2. Պարտադիր զինվորական ծառայություն անցնող Հայաստանի Հանրապետության քաղաքացին չի կարող հրաժարվել իր ծառայությունից եւ ընտրել այլընտրանքային ծառայություն:

(*հոդված 2,3 լրաց. 22.11.2004թ.*)

Հոդված 4. Այլընտրանքային ծառայության ուղարկվող քաղաքացին

Այլընտրանքային ծառայության ուղարկվում է այն քաղաքացին, ով մինչեւ հերթական գորակոչին նախորդող մարտի 1-ը կամ սեպտեմբերի 1-ը դիմել է իր բնակության վայրի զինվորական կոմիսարիատ՝ սույն օրենքի 3-րդ հոդվածի հիմքով պարտադիր զինվորական ծառայություն անցնելու հնարավորության բացակայության մասին, եւ ում նկատմամբ տեղական գորակոչային հանձնաժողովը կայացրել է համապատասխան որոշում:

Սույն օրենքի դրույթները չեն տարածվում պարտադիր զինվորական ծառայությունից ազատման կամ տարկետման իրավունք ստանալու հիմք ունեցող քաղաքացիների վրա:

Հոդված 5. Այլընտրանքային ծառայության ժամկետը

Այլընտրանքային զինվորական ծառայության ժամկետը սահմանվում է 36 ամիս:

Այլընտրանքային աշխատանքային ծառայության ժամկետը սահմանվում է 42 ամիս:

ԳԼՈՒԽ 2
ԱԼՅԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՉՈՐԱԿՈՉ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼԸ

Հոդված 6. Այլընտրանքային ծառայության գորակոչը
Այլընտրանքային ծառայության գորակոչը եւ պահեստ արձա-
կունը կատարվում է պարտադիր զինվորական ծառայության գո-
րակոչի եւ պահեստ արձակելու հետ համատեղ, Հայաստանի Հան-
րապետության Նախագահի հրամանագրով սահմանված ժամ-
կետներում:

Այլընտրանքային ծառայության համար դիմած քաղաքացին,
այլընտրանքային ծառայության գորակոչ հայտարարվելուց հետո,
պարտավոր է ծանուցագրում նշված ժամկետում ներկայանալ իր
բնակության վայրի զինվորական կոմիսարիատ:

Այլընտրանքային ծառայության գորակոչի անցկացման հարցե-
րով զբաղվում են «Ձինապարտության մասին» Հայաստանի Հան-
րապետության օրենքով սահմանված կարգով ստեղծված տեղա-
կան գորակոչային հանձնաժողովը եւ այլընտրանքային ծառայու-
թյուն անցնելու մասին դիմումները քննարկող հանրապետական
հանձնաժողովը (այսուհետ՝ հանրապետական հանձնաժողով), ո-
րի ստեղծման, գործունեության կարգը եւ անդամների կազմը սահ-
մանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

(հոդված 6 լրաց. 22.11.2004թ.)

Հոդված 7. Պարտադիր զինվորական ծառայությունն այլընտ-
րանքային ծառայությամբ փոխարինելու մասին դիմու-
մը

Պարտադիր զինվորական ծառայության գորակոչի ենթակա քա-
ղաքացին այլընտրանքային ծառայություն ընտրելիս սույն օրենքի
4-րդ հոդվածով սահմանված ժամկետում գրավոր դիմում է ներկա-
յացնում իր բնակության վայրի զինվորական կոմիսարիատ՝ նշելով
իր նախընտրած այլընտրանքային ծառայության տեսակը եւ շա-
րադրելով պարտադիր զինվորական ծառայությունն այլընտրան-
քային ծառայությամբ փոխարինելու պատճառները:

Քաղաքացու դիմումը, տարածքային զինվորական կոմիսարիա-

տում գրանցելուց հետո՝ 10 օրվա ընթացքում, նրա անձնական գործի հետ ներկայացվում է տեղական գորակոչային հանձնաժողով:

Հոդված 8. Այլընտրանքային ծառայության մասին դիմումը քննարկելը

Տեղական գորակոչային հանձնաժողովը նախապատրաստում է հանրապետական հանձնաժողով է ներկայացնում այլընտրանքային ծառայություն անցնելու մասին դիմած քաղաքացու վերաբերյալ փաստաթղթերը:

Հանրապետական հանձնաժողովն այլընտրանքային ծառայություն անցնելու մասին դիմումը քննարկում է առանձին նիստում: Հանձնաժողովի նիստի ժամանակի եւ վայրի մասին դիմողը նախապես տեղեկացվում է: Հանրապետական հանձնաժողովը յուրաքանչյուր դիմումի համար ընդունում է որոշում:

(հոդված 7,8 լրաց. 22.11.2004թ.)

Հոդված 9. Պարտադիր զինվորական ծառայությունն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու մասին դիմումը մերժելու հիմքերը

Հանրապետական հանձնաժողովի որոշմամբ քաղաքացու դիմումը՝ պարտադիր զինվորական ծառայությունն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու մասին կարող է մերժվել, եթե այլընտրանքային ծառայության մասին՝

1) դիմում ներկայացրած քաղաքացին կրկին կանչվում է հանրապետական գորակոչային հանձնաժողովի նիստին և անհարգելի պատճառով չի ներկայանում.

2) դիմումում կան կեղծ տեղեկություններ:

Հանրապետական հանձնաժողովի կողմից քաղաքացու դիմումը մերժվելու դեպքում նրան 10 օրվա ընթացքում տրվում է հանրապետական հանձնաժողովի նիստի արձանագրությունից քաղվածք: Քաղվածքում նշվում է, թե ինչ պատճառներով է մերժվել նրա՝ այլընտրանքային ծառայություն անցնելու մասին դիմումը:

Հոդված 10. Այլընտրանքային ծառայության մասին դիմումն առանց քննարկման թողնելը

Հանրապետական հանձնաժողովը դադարեցնում է այլընտրանքային ծառայության մասին դիմումի քննարկումը եւ ընդունում է

համապատասխան որոշում, եթե այլընտրանքային ծառայության մասին դիմումի քննարկման ընթացքում հայտնաբերվում է, որ դիմում ներկայացրած քաղաքացին ենթակա չէ գորակոչի կամ ունի պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունք:

Հոդված 11. Այլընտրանքային ծառայության գորակոչելու կապակցությամբ վեճեր լուծելը

Եթե հանրապետական հանձնաժողովը մերժում է քաղաքացու՝ պարտադիր զինվորական ծառայությունն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու մասին դիմումը, ապա որոշումն ընդունելու օրվանից մեկամսյա ժամկետում գորակոչիկն իրավունք ունի այն բողոքարկելու դատարան՝ օրենքով սահմանված կարգով:

(հոդված 11 լրաց. 22.11.2004թ.)

Հոդված 12. Այլընտրանքային ծառայությունից ազատելը կամ տարկետում տալը

Այլընտրանքային ծառայությունից ազատելը կամ տարկետում տալն իրականացվում է «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Հոդված 13. Այլընտրանքային ծառայության սկիզբը

Զինվորական կոմիսարիատը, գորակոչային հանձնաժողովի որոշման հիման վրա, գորակոչիկին հանձնում է ծանուցագիր այլընտրանքային ծառայության մեկնելու համար զինվորական կոմիսարիատ ներկայանալու վերաբերյալ: Այլընտրանքային ծառայության վայր մեկնելու համար զինվորական կոմիսարիատ ներկայանալու օրը համարվում է այլընտրանքային ծառայության սկիզբ:

Հոդված 14. Այլընտրանքային ծառայություն իրականացնելն ապահովելը

Այլընտրանքային ծառայության գորակոչը կազմակերպում է նրա իրականացումը վերահսկում է պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը:

Հայաստանի Հանրապետությունում այլընտրանքային ծառա-

յություն անցնելու վայրերի ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Այլընտրանքային ծառայության կազմակերպման եւ իրականացման ծախսերը ֆինանսավորվում են պետական բյուջեի միջոցների հաշվից:

Հոդված 15. Այլընտրանքային զինվորական ծառայությունը պարտադիր զինվորական ծառայությամբ փոխարինելը Այլընտրանքային զինվորական ծառայությունը փոխարինվում է պարտադիր զինվորական ծառայությամբ, եթե այլընտրանքային զինվորական ծառայողն այդ մասին դիմում է ներկայացնում զորամասի հրամանատարին՝ զորակոչվելուց 6 ամսվա ընթացքում:

Գ Լ ՈՒ Խ 3

ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՆԵԼԸ

Հոդված 16. Այլընտրանքային զինվորական ծառայություն անցնելու կարգը

1. Այլընտրանքային զինվորական ծառայության զորակոչված քաղաքացին սահմանված կարգով ուղարկվում է այլընտրանքային զինվորական ծառայություն անցնելու վայրի զորամաս եւ ընդգրկվում զորամասի անձնակազմի ցուցակներում:

2. Այլընտրանքային զինվորական ծառայողը Հայաստանի Հանրապետության պետական դրոշի առջեւ տալիս է երդում եւ ստանձնում համապատասխան պարտավորություններ:

3. Այլընտրանքային զինվորական ծառայողը ծառայության է անցնում զորամասի հրամանատարի հաստատած կարգացուցակի համաձայն: Նրա վրա տարածվում են զինված ուժերի կանոնադրերի (կանոնադրությունների) դրույթները՝ բացառությամբ մարտական հերթապահության, զենք կրելու, պահելու, պահպանելու եւ օգտագործելու հետ կապված պահանջների:

4. Այլընտրանքային զինվորական ծառայողը կրում է համազգեստ, որի ձեւը եւ կրելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

5. Այլընտրանքային զինվորական ծառայողների հագուստի,

աննդի, հանգստի եւ քնելու պայմանների ապահովումն իրականացվում է շարքային կազմի պարտադիր զինծառայողների համար սահմանված կարգով: Այլընտրանքային զինվորական ծառայողների հանգստի եւ քնելու համար նախատեսված տարածքներն առանձնացվում են պարտադիր զինծառայողների հանգստի ու քնելու համար նախատեսված տարածքներից:

6. Այլընտրանքային զինվորական ծառայողը Հայաստանի Հանրապետության զինված ուժերի եւ այլ զորքերի պարտադիր կամ պայմանագրային զինծառայողների համար նախատեսված պաշտոններում չի կարող նշանակվել:

7. Այլընտրանքային զինվորական ծառայողներին արգելվում է ծառայության ընդգրկել մարտական ստորաբաժանումներում, նրանց տալ մարտական բնույթի հրամաններ, ինչպես նաեւ զենք եւ զինամթերք կրելու, պահելու, պահպանելու եւ օգտագործելու հետ կապված հանձնարարություններ:

8. Այլընտրանքային զինվորական ծառայողները ծառայությունից պահեստ արձակվում եւ պահեստագորում հաշվառվում են օրենքով սահմանված կարգով:

Հոդված 17. Այլընտրանքային աշխատանքային ծառայություն անցնելու կարգը

1. Այլընտրանքային աշխատանքային ծառայության զորակոչված քաղաքացին սահմանված կարգով ուղարկվում է այլընտրանքային աշխատանքային ծառայություն անցնելու վայրի կազմակերպություն:

2. Այլընտրանքային աշխատանքային ծառայություն անցնելու վայրի կազմակերպության ղեկավարն այլընտրանքային աշխատանքային ծառայողին ընդգրկում է կազմակերպության հաստիքացուցակում, որոշում է նրա աշխատանքի տեսակը, կարգն ու պայմանները՝ ապահովելով լրիվ զբաղվածություն եւ եռօրյա ժամկետում այդ մասին գրավոր տեղեկացում է կազմակերպության գտնվելու վայրի զինվորական կոմիսարիատին:

3. Այլընտրանքային աշխատանքային ծառայողն այլ կազմակերպություն կամ այլ վայր ծառայության կարող է փոխադրվել պաշտպանության բնագավառում պետական լիազոր մարմնի համաձայնությամբ կամ նախաձեռնությամբ:

4. Այլընտրանքային աշխատանքային ծառայողը ծառայության վայրում գտնվում է շուրջօրյա: Ծառայության վայր է համարվում կազմակերպությանը տնօրինման, տիրապետման եւ օգտագործման իրավունքով պատկանող տարածքը:

5. Այլընտրանքային աշխատանքային ծառայողը ծառայության ընթացքում չի կարող նշանակվել ղեկավար պաշտոնում, ինչպես նաեւ զբաղվել այլ գործունեությամբ:

6. Այլընտրանքային աշխատանքային ծառայողները ծառայությունից պահեստ արձակվում եւ պահեստագործում հաշվառվում են օրենքով սահմանված կարգով:

Հոդված 18. Այլընտրանքային աշխատանքային ծառայության վայրի կազմակերպության ղեկավարի պարտականությունները

1. Այլընտրանքային աշխատանքային ծառայության վայրի կազմակերպության ղեկավարն այլընտրանքային աշխատանքային ծառայողին ապահովում է սննդով, սահմանված ձեւի արտահագուստով, ներքնաշորերով, քնելատեղով, անկողնային եւ անձնական հիգիենայի պարագաներով, ծանոթացնում է կազմակերպության աշխատանքային ներքին կարգապահական կանոններին ու կատարվող աշխատանքների առանձնահատկություններին:

2. Կազմակերպության ղեկավարը ծառայության վայրում պարտավոր է ապահովել այլընտրանքային աշխատանքային ծառայողի անվտանգությունը, հետեւել ծառայության կատարման ընթացքին, ստեղծել անհրաժեշտ պայմաններ ծառայողի հանգստի կազմակերպման եւ ընտանիքի անդամների հետ նրա տեսակցությունների համար, որոնք իրականացվում են «Զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

3. Կազմակերպության ղեկավարը պատասխանատու է կազմակերպությունում այլընտրանքային աշխատանքային ծառայության կազմակերպման եւ իրականացման համար:

Հոդված 19. Այլընտրանքային ծառայողների իրավունքները եւ պարտականությունները

1. Այլընտրանքային ծառայողին տրվում է ամսական դրամա-

կան բավարարում՝ պարտադիր զինվորական ծառայության շարքային կազմի համար սահմանված չափով: Դրամական բավարարումը վճարվում է ծառայության վայրում:

2. Այլընտրանքային ծառայողին ծառայության ընթացքում որպես խրախուսանք կարող է տրվել 15 օրացուցային օր տետողությամբ միանվագ արձակուրդ: Այլընտրանքային ծառայողի երեխայի ծնվելու, ընտանիքի անդամի ամուսնության կամ մահվան դեպքերում նրան կարող է տրվել լրացուցիչ արձակուրդ՝ մինչև 5 օրացուցային օր տետողությամբ:

Ելնելով ծառայողական անհրաժեշտությունից, ինչպես նաև ռազմական դրություն հայտարարվելու կամ արտակարգ իրավիճակների դեպքերում, համապատասխան ղեկավարի (հրամանատարի) հրամանով այլընտրանքային ծառայողն արձակուրդից կարող է հետ կանչվել՝ արձակուրդի չօգտագործված օրերը հետագայում օգտագործելու պայմանով:

3. Այլընտրանքային ծառայողների խրախուսումն իրականացվում է համապատասխան օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Ծառայության ընթացքում այլընտրանքային ծառայողները պարտավոր են պահպանել ծառայության ներքին կարգապահության կանոնները, կատարել իրենց պարտականությունները եւ համապատասխան ղեկավարի (հրամանատարի) հրամաններն ու հանձնարարականները, կրել սահմանված մնուշի արտահագուստ, ինքնակամ չլքել ծառայության վայրը:

5. Այլընտրանքային զինվորական ծառայողների աշխատաժամանակը կարգավորվում է ներքին ծառայության կանոններով:

Այլընտրանքային աշխատանքային ծառայողի համար սահմանվում է վեցօրյա աշխատանքային շաբաթ: Այլընտրանքային աշխատանքային ծառայողի աշխատաժամանակի տետողությունը չի կարող օրական 8 ժամից ավելի կամ պակաս լինել, բացառությամբ արտաժամյա ծառայության ներգրավման դեպքերի, որոնք կարող են իրականացվել ծառայության վայրում տարերային կամ տեխնաժին աղետի, հրդեհի, վթարի կանխման կամ դրանց հետեւանքների վերացման, ինչպես նաև այնպիսի ծառայողական առաջադրանքների կատարման համար, որոնք, իրենց առանձնահատկություններով պայմանավորված, չեն կարող կասեցվել կամ դադարեցվել:

Հոդված 20. Այլընտրանքային ծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովությունը

1. Այլընտրանքային զինվորական ծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության հարցերը կարգավորվում են «Ձինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

2. Այլընտրանքային աշխատանքային ծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովությունը (ներառյալ՝ աշխատանքային խեղման կամ մասնագիտական հիվանդության հետեւանքով հաշմանդամ ճանաչվելու կամ մահանալու դեպքում) իրականացվում է «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

3. Այլընտրանքային ծառայության ժամկետը ներառվում է քաղաքացու ընդհանուր աշխատանքային եւ ապահովագրական ստաժում:

Հոդված 21. Այլընտրանքային ծառայողների պատասխանատվությունը

1. Այլընտրանքային զինվորական ծառայողներն իրենց կատարած իրավախախտումների եւ հանցագործությունների (ներառյալ՝ զորամասն ինքնակամ լքելու, ինչպես նաեւ պետությանը հասցրած գույքային վնասի) համար պատասխանատվություն են կրում պարտադիր զինվորական ծառայության զինծառայողներին հավասար՝ օրենքով սահմանված կարգով:

2. Այլընտրանքային աշխատանքային ծառայողներն իրենց կատարած իրավախախտումների եւ հանցագործությունների, ինչպես նաեւ պետությանը հասցրած գույքային վնասի համար պատասխանատվություն են կրում ընդհանուր հիմունքներով՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Այլընտրանքային աշխատանքային ծառայողները ծառայության վայրն ինքնակամ լքելու համար պատասխանատվություն են կրում պարտադիր զինվորական ծառայության զինծառայողներին հավասար՝ օրենքով սահմանված կարգով:

(հոդված 16-21 լրաց. 22.11.2004թ.)

ԳԼՈՒԽ 4

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 23. Օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2004 թվականի հուլիսի 1-ից:

Հոդված 24. Սույն օրենքից բխող իրավական ակտեր ընդունելը

1. Սույն օրենքի 14-րդ եւ 16-րդ հոդվածներից բխող որոշումները Հայաստանի Հանրապետության կառավարությունն ընդունում է մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը:

2. Սույն օրենքի 6-րդ հոդվածից բխող որոշումը Հայաստանի Հանրապետության կառավարությունն ընդունում է օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

(հոդված 24 լրաց. 22.11.2004թ.)

**ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՎԱՅՐԵՐԻ
Ց Ա Ն Կ Ը**

Ծառայության վայրի անվանումը	Թիվը	Պաշտոնը	Լիազոր մարմինը
1. Սյունիքի մարզ	100	զինվոր	ՀՀ ՊՆ
2. Գեղարքունիքի մարզ	100	զինվոր	ՀՀ ՊՆ
3. Տավուշի մարզ	100	զինվոր	ՀՀ ՊՆ
4. Թիվ 1 ինտերնատ	6	սանիտար	ՀՀ ԱՄՆ
5. Նորքի տուն-ինտերնատ	2	սանիտար	ՀՀ ԱՄՆ
6. Վարդենիսի հոգեբուժական տուն-ինտերնատ	8	սանիտար	ՀՀ ԱՄՆ
7. Գյումրու ծերերի եւ հաշ. տուն-ինտերնատ	4	սանիտար	ՀՀ ԱՄՆ
8. ՀՀ ԱՆ պետական առողջապ. գործակալ.	3	սանիտար	ՀՀ ԱՆ
9. «ՀՀ ԱՆ հոգեբուժական կենտրոն» փբը	5	սանիտար	ՀՀ ԱՆ
10. «Նորք» ինֆեկցիոն հիվանդանոց	4	սանիտար	ՀՀ ԱՆ
11. Սեւանի հանրապետ. հոգեբուժ. հիվանդ.	10	սանիտար	ՀՀ ԱՆ
12. Կապանի նյարդահոգեբուժական դիսպանսեր	2	սանիտար	ՀՀ ԱՆ
13. Վանաձորի նյարդահոգեբուժական դիսպանսեր	2	սանիտար	ՀՀ ԱՆ
14. Գյումրու նյարդահոգեբուժական դիսպանսեր	3	սանիտար	ՀՀ ԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ
ՄԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳԻ ԽԱԽՏԱՄԲ ՊԱՐՏԱԳԻՐ
ՋԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՉԱՆՑԱԾ
ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Ընդունվել է 17.12.2003

Հոդված 1. Օրենքի գործողության ոլորտը

Սույն օրենքի գործողության ոլորտն ընդգրկում է 1992 թվականի աշնանային գորակոչից մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը օրենքի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայության չգորակոչված, հետագայում 27 տարին լրացած կամ սահմանված կարգով պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ տարկետման իրավունք ստանալու հիմքեր ձեռք բերած Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին (այսուհետ՝ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիներ):

Հոդված 2. Պարտադիր վճարների դրույքաչափերը

Պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիները, պարտադիր զինվորական ծառայության գորակոչին օրենքի խախտմամբ չներկայանալու պահից սկսած մինչև 27 տարին լրանալը կամ սահմանված կարգով պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ տարկետման իրավունք ստանալու հիմքերը ձեռք բերելը, յուրաքանչյուր գորակոչին չգորակոչվելու դիմաց կարող են մուծել վճարներ՝ հետեւյալ դրույքաչափերով.

1. Պարտադիր զինվորական ծառայություն չանցած եւ 27 տարին լրացած զինապարտ քաղաքացիները *նվազագույն աշխատավարձի 100 - ասպտիկի չափով*

2. Պարտադիր զինվորական ծառայություն չանցած եւ հետագայում պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու հիմքեր ձեռք բերած զինապարտ այն քաղաքացին՝

1) ով հանրապետական գորակոչային հանձնաժողովի կողմից առողջական վիճակի պատճառով ճանաչվել է զինծառայության համար ոչ պիտանի՝ հանվելով զինվորական հաշվառումից *նվազագույն աշխատավարձի 30-ասպտիկի չափով*

2) ում հայրը կամ հարազատ եղբայրը մահացել (գոհվել) է Հա-

յաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ կամ զինված ուժերում եւ այլ զորքերում ծառայողական պարտականություններ կատարելու ժամանակ, եւ նա այդ ընտանիքի միակ արու զավակն է 0

3) ով ունի գիտական աստիճան (գիտության թեկնածու կամ գիտության դոկտոր) եւ զբաղվում է մասնագիտական, գիտական կամ մանկավարժական գործունեությամբ *նվազագույն աշխատավարձի 50-ապատիկի չափով*

3. Պարտադիր զինվորական ծառայություն չանցած եւ հետագայում կառավարության որոշմամբ պարտադիր զինվորական ծառայությունից ազատված քաղաքացիները *նվազագույն աշխատավարձի 50-ապատիկի չափով*

4. Պարտադիր զինվորական ծառայություն չանցած եւ հետագայում պարտադիր զինվորական ծառայությունից ուսումը շարունակելու համար տարեկետման իրավունք ստանալու հիմք ձեռք բերած զինապարտ քաղաքացիները *նվազագույն աշխատավարձի 150 -ապատիկի չափով*

5. Պարտադիր զինվորական ծառայություն չանցած եւ հետագայում ընտանեկան դրության բերմամբ տարեկետման իրավունք ստանալու հիմք ձեռք բերած այն քաղաքացիները, ովքեր ունեն՝

1) անաշխատունակ հայր եւ մայր կամ միայնակ անաշխատունակ հայր կամ մայր, եթե նրանք չունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացի համարվող աշխատունակ, պարտադիր զինվորական ծառայության մեջ չգտնվող այլ զավակ: Անաշխատունակ ծնողներ են՝

- ծերության կենսաթոշակի իրավունք սովող տարիքի հասած հայրը եւ մայրը,

- առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ հայրը եւ մայրը,
- դատարանի վճռով անգործունակ ճանաչված հայրը եւ մայրը)

2) առանց մոր մեծացող երեխա.

3) երկու երեխա.

4) առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ կին.

5) առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ կամ դատարանի վճռով անգործունակ ճանաչված հարազատ քույր կամ եղբայր, եթե չկա նրա հետ բնակվող ընտանիքի անդամ համարվող աշխատունակ այլ անձ.

6) երկրորդ երեխայով կամ զույգ երեխայով վեցամսյա հղիության շրջանում գտնվող կին.

7) օրենքով չնախատեսված դեպքերում ընտանեկան դրության բերմամբ տարկետում ստանալու իրավունք *նվազագույն աշխատավարձի 30-ապատիկի չափով*

6. Պարտադիր զինվորական ծառայություն չանցած եւ հետագայում 3 ու ավելի երեխա կամ առանց մոր մեծացող 2 երեխա ունեցողները՝ անկախ 27 տարին լրանալու հանգամանքից 0

7. Պարտադիր զինվորական ծառայություն չանցած եւ հետագայում պարտադիր զինվորական ծառայությունից առողջական վիճակի պատճառով տարկետման իրավունք ստանալու հիմք ձեռք բերած զինապարտ քաղաքացիները *նվազագույն աշխատավարձի 30-ապատիկի չափով*

8. Պարտադիր զինվորական ծառայություն չանցած եւ հետագայում այլ հիմքերով զինվորական ծառայությունից տարկետման իրավունք ստանալու հիմք ձեռք բերած զինապարտ քաղաքացիները *նվազագույն աշխատավարձի 200 - ապատիկի չափով*

9. Պարտադիր զինվորական ծառայություն չանցած եւ հետագայում այլ պետության քաղաքացիություն ձեռք բերած քաղաքացիները *նվազագույն աշխատավարձի 100-ապատիկի չափով*

10. Պարտադիր զինվորական ծառայություն չանցած այն քաղաքացիները, ովքեր նախկինում դատապարտվել են ազատազրկման՝ ծանր կամ առնվազն երկու անգամ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար եւ ազատազրկման վայրում պատիժը կրել են երեք տարուց ոչ պակաս, ինչպես նաեւ, եթե կատարել են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության եւ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության հաստատած ցանկում նշված հանցագործություն, որի համար ենթակա չեն զորակոչի *նվազագույն աշխատավարձի 100 - ապատիկի չափով*

Սույն օրենքով նախատեսված դեպքերում վճար մուծած քաղաքացիներին տարկետում տրվում է մինչեւ նրանց 27 տարեկան դառնալը՝ «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Հոդված 3. Պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների դիմումը

Պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիներին դիմում է ներկայացնում այն զինվորական կոմիսարիատ, որտեղ նա հաշվառված է:

Դիմումին կից ներկայացվում են պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ տարկետման իրավունք ստանալու հիմքերը:

Օտարերկրյա պետություններում գտնվող պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիներին դիմումը կարող է ներկայացնել օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայություն կամ հյուպատոսական հիմնարկ:

Պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացու դիմումը սահմանված կարգով գրանցվելուց հետո փոխանցվում է համապատասխան մարմիններին:

Պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացու դիմումի հետ կապված փոստային առաքումների ծառայության վճարները, համապատասխան մարմինների ներկայացմամբ, կատարում է դիմումատու:

Հոդված 4. Պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների դիմումի քննարկումը

Պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների դիմումը քննարկվում է, և քաղաքացուն պատասխանը տրվում է մեկ ամսվա ընթացքում: Լրացուցիչ ուսումնասիրություն և ստուգում պահանջող դիմումները քննարկվում են, և քաղաքացուն պատասխանը տրվում է երկու ամսից ոչ ուշ:

Պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացու դիմումը քննարկող մարմինների ցանկը և դիմումի քննարկման կարգն ու ժամանակացույցը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Դիմումի պատասխանի հետ համաձայն չլինելու դեպքում քաղաքացին իրավունք ունի պատասխանն ստանալու օրվանից մեկ ամսյա ժամկետում դա բողոքարկել դատարան՝ օրենքով սահմանված կարգով:

Հոդված 5. Վճար մուծելու կարգը

Պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիները դիմումի պատասխանն ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում, սույն օրենքով սահմանված վճարները մուծում են բանկային համակարգի միջոցով: Այդ վճարները մուտքագրվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության բնագավառում պետական լիազոր մարմնի կողմից այդ նպատակով բացված հատուկ հաշվում:

Հոդված 6. Հարուցված քրեական հետապնդումը դադարեցնելը եւ պահեստագործում հաշվառելը

Օրենսդրության խախտմամբ պարտադիր զինվորական ծառայության չգորակոչված, հետագայում 27 տարին լրացած կամ սահմանված կարգով պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ տարկետման հիմքեր ձեռք բերած քաղաքացուն, սույն օրենքով սահմանված վճարը մուծելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, տրվում է իր նկատմամբ հարուցված քրեական հետապնդման դադարեցման մասին վարույթն իրականացնող մարմնի որոշումը, ինչպես նաեւ նա ստանում է զինվորական գրքույկ եւ հաշվառվում է պահեստագործում:

Պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցնելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 7. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2004 թվականի մարտի 1-ից:
2. Սույն օրենքից բխող իրավական ակտերը Հայաստանի Հանրապետության կառավարությունն ընդունում է մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը:

5. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Սեփական իրավունքները պաշտպանելու համար, նախևառաջ պահպանեք հետևյալ կարգը.

* Պատճենահանեք Ձեր անձնագիրը և ներկայացրեք այն միայն տեղական (տարածքային) ՋԿ և ՋՀ անդամներին:

* Դիմումներն ու բողոքներն ուղարկեք փոստով, պատվիրված նամակով՝ ծանուցումով (միայն ծայրահեղ դեպքում հանձնեք քարտուղարություն՝ ստորագրությամբ):

* Դիմումների մեջ կարելի է խնդրել, որ ՋՀ նիստերին զորակոչիկից բացի ներկա լինեն նաև նրա ծնողները և/կամ նրա ներկայացուցիչները:

* Անպայման Ձեզ մոտ պահեք դիմումների և բողոքների պատճենները և իսկական բժշկական փաստաթղթերը:

* Ուշադիր հետևեք պատասխանների ժամկետների պահպանմանը:

Բոլոր դեպքերում, բացի դատարանին ուղղված բողոքից.

1. Եթե Ձեզ չեն պատասխանել բողոքի ստացումից 1 ամսվա ընթացքում Դուք կարող եք բողոքարկել տվյալ պաշտոնատար անձի անօրինական գործողությունները, որով խախտվել է Ձեր Սահմանադրական իրավունքը, դատախազություն, հանրապետական ՀՁ, վարչական մարմիններին: (Համաձայն «Զաղաքացիների առաջարկությունները, դիմումները և գանգատները քննարկելու կարգի մասին» ՀՀ օրենքի):

2. Եթե Ձեզ չեն պատասխանել բողոքի ստացումից մեկ ամսվա ընթացքում, Դուք կարող եք բողոքարկել պաշտոնատար անձի անօրինական գործողությունները, որով խախտվել է Ձեր Սահմանադրական իրավունքը, տեղական (տարածքային) դատարան:

(Համաձայն «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և գանգատները քննարկելու կարգի մասին» ՀՀ օրենքի):

* Հիշեք, որ գործող օրենսդրությունը Ձեզ պարտավորեցնում է կոնկրետ պարագայում զինկոմի կանչով ամփջապես ներկայանալ, բայց դա չի պարտավորեցնում Ձեզ զինկոմիսարին ներկայացնել որևէ տեղեկություն, բացի ընթացիկ պահին Ձեր գրանցման մասին տեղեկությունից:

* Մի բացեք Ձեր բնակարանի դուռը անձանոթների առջև: Անկոչ հյուրին առաջարկեք կապվել Ձեզ հետ հեռախոսով:

* Չորակոչի հետ կապված Ձեզ կարող են ուղարկել ծանուցագիր տարբեր հիմնարկություններից՝ տեղական (տարածքային) ՁՀ, ՁԿ, ոստիկանությունից, դատախազությունից, դատարանից:

- Ցանկացած ծանուցագիր պետք է լրացված լինի պատշաճ կերպով: Դրանում անպայման պետք է նշված լինեն.
- ծանուցագիր ուղարկած հիմնարկության տվյալները
- ամիս-ամսաթիվը
- տվյալ ծանուցագրով կանչվողի ներկայանալու վայրը և ժամը
- կանչի նպատակը:

Ծանուցագրում անձի վերաբերյալ տվյալների բացակայությունը հետագայում կխանգարի այդ անձին որևէ պատասխանատվության կանչելուն (այն մասին, որ կանչողը ծանոթ է ծանուցագրի բովանդակությանը վկայում է ծանուցագրի անդորրագրի վրա նրա անձնական ստորագրությունը):

* Չորակոչից խուսափելու գործերը կարող են վարել միայն տեղական (տարածքային) դատախազության քննիչները: Այդիսկ պատճառով ոստիկանությունից ստացված ծանուցագիրը, որտեղ նշված է համապատասխան հոդվածը, վկայում է, որ Ձեզ ուզում են վախեցնել, բացի այդ, հետագայում դա հիմք կարող է հանդիսանալ հաջորդականության խախտման դեմ բողոքելու դեպքում: Բողոքը ուղարկեք Ձեր տեղական (տարածքային) դատախազություն:

* Հիշեք ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածը, ըստ որի, օրենք-

ները կիրառվում են միայն պաշտոնական հրապարակումից հետո: Մարդու իրավունքներին, ազատություններին և պարտականություններին վերաբերող չհրապարակված իրավական ակտերն իրավաբանական ուժ չունեն:

**6. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ
ԱՆԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԲՈՂՈՔՆԵՐԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԸ**

Եթե պետական մարմինների, պաշտոնատար անձանց գործողությունները կամ անգործունեությունը խախտում են Ձեր իրավունքները, ապա Դուք իրավունք ունեք դրանք բողոքարկել: Պետական մարմինների, պաշտոնատար անձանց անօրինական գործողությունները կամ անգործունեությունը կարող են բողոքարկվել.

- ինչպես ձևական կողմը չպահելու համար, օրինակ, Ձեր դիմումին կամ բողոքին սահմանված ժամկետում չպատասխանելը, ՉՀ որոշման պատճեն չտալը (անկախ որոշման բովանդակությունից).

- այնպես էլ ըստ էությանը, օրինակ, թույլ չեն տվել Ձեզ ծանոթանալու Ձեր անձնական գործին կամ գորակոչի մասին որոշման վերաբերյալ Ձեր բժշկական փաստաթղթերին, հակառակ տարկետման կամ ազատման Ձեր իրավունքի:

ՀՀ Սահմանադրության համաձայն

- Քաղաքացիները անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից ունեն Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված բոլոր իրավունքները, ազատությունները և պարտականությունները: (Գ. 2, հ. 15)

- Բոլորը հավասար են օրենքի առջև և առանց խտրականության հավասարապես պաշտպանվում են օրենքով: (Գ.2, հ 16)

- Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձեռնմխելիության

իրավունք: (Գ. 2, հ. 18)

- Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք:

- Յուրաքանչյուր ոք ունի Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունք: (Գ.2, հ. 38)

7. ՈՒՄ ԴԻՍԵԼ ՉՈՐԱԿՈՉԻԿԻ ԻՐԱՎՈՒՆԵՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՐ

ՀՀ Վճռաբեկ դատարան

Վ. Սարգսյանի 5

հեռ. 58-00-84

ՀՀ Արդարադատության նախարարություն

Վ. Սարգսյանի 3, հեռ. 58-21-57

ՀՀ Դատախազություն

Վ. Սարգսյանի 5, հեռ. 56-76-55

ՀՀ Ձինվորական դատախազություն

Սունդուկյան 66Ա

դատախազ հեռ. 25-12-30

գրասենյակ 26-92-54

ՀՀ ՊՆ զինվորական ոստիկանություն

Ադմիրալ Իսակովի փող. 18/10, հեռ. 77-05-80, 56-35-73

ՀՀ զինվորական դատախազության

Երևանի կայազորի

դատախազ 22-04-10

գրասենյակ 22-37-87

Գյումրիի կայազորի զինվորական դատախազություն

դատախազ 312-3-43-15

տեղակալ 3-42-02

Սևանի կայազորի

դատախազ 9261-2-24-41

տեղակալ 2-21-61

Ջանգեզուրի կայազորի

դատախազ 02830-57-71

տեղակալ 56-72

Լոռու կայազորի

դատախազ 0322-5-58-51

տեղակալ 5-38-46

Հանրապետական զինվորական կոմիսարիատ

Մոսկովյան փող. 5, հեռ. 52-99-61, 52-99-51

ՀՀ ՊՆ ռազմաբժշկական կենտրոնական հանձնաժողով

Երևան-75, Մուրացան 116, հեռ. 45-80-28

ՀՀ ՊՆ ռազմաբժշկական վարչություն

Մուրացանի փող. 116, հեռ. 45-89-65

ՀՀ ՊՆ բժշկական հոսպիտալներ

Նոր-Արեշ, Մուրացան 116 հեռ. 45-89-49

Կանազ հեռ. 23-00-12

**ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ - ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Հայաստանի «Զինվորի մայր» հանրապետական կոմիտե
Երևան, Խանջյան 5, հեռ. 52-99-31

«Ավանգարդ» հումանիտար հետազոտությունների կենտրոն
Երևան, Ս.Տարոնցի փող. 3/2, բն. 16, հեռ. 48-60-42, 55-32-34

**Ա.Գ.Սախարովի անվան առաջադիմության, մարդու իրավունք-
ների պաշտպանության և գթասիրության հայկական հիմնադրամ**
Երևան-375009, Ջրաշատի փող. 1, հեռ. 56-15-60, 56-15-05, 58-78-64

**Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Հայաստանի ազ-
գային կոմիտե**
Երևան - 375009, Տերյանի փող. 57, բն. 22, հեռ. 58-34-17, 53-73-28

Ժողովրդավարության և մարդու իրավունքների ազգային կենտրոն
Երևան-375025, Խանջյան փող. 50, հեռ. 57-60-36, 57-53-36

**ՁԵՁ ԱՆՀՐԱԺԵՇՏ
ՀԱՍՑԵՆԵՐ ԵՎ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՆԵՐ**

ՀՀ նախագահի ընդունարան
Մարշալ Բաղրամյան պող. 26
հեռ. 52-47-12, 52-54-00

Նախագահի աշխատակազմ
Մարշալ Բաղրամյան պող. 26
հեռ. 52-02-14

Նախագահի խորհրդական ՋՈՒ գծով
Մարշալ Բաղրամյան պող. 26
հեռ. 58-87-14

Ներման, քաղաքացիության, պարզևների, կոչումների բաժին
Մարշալ Բաղրամյան պող. 26
հեռ. 52-48-58

Քաղաքացիների ընդունելության և նամակների բաժին
Մարշալ Բաղրամյան պող. 26
հեռ. 52-23-30

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Նախագահի ընդունարան
Մարշալ Բաղրամյան պող. 19, հեռ. 58-82-25

Ազգային ժողովի աշխատակազմ
Մարշալ Բաղրամյան պող. 19, հեռ. 58-83-05

**Պաշտպանության, ազգային անվտանգության և
ներքին գործերի մշտական հանձնաժողով**
Մարշալ Բաղրամյան պող. 19, հեռ. 58-84-61, 58-84-67

Իրավաբանական հանձնաժողով
Մարշալ Բաղրամյան պող. 19, հեռ. 58-86-47

Քարտուղարություն
Մարշալ Բաղրամյան պող. 19, հեռ. 58-82-54

**ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Նախարարի ընդունարան

Գևորգ Չամուշի 30, հեռ. 35-79-00

Անձնակազմի հետ տարվող աշխատանքների վարչություն

հեռ. 39-82-26

Իրավաբանական բաժին

հեռ. 35-78-22

Քարտուղարություն

հեռ. 35-78-30

Հսկողության բաժին

հեռ. 28-75-71

ՀՀ Սպայի տան զինվորական իրավաբանական ծառայություն

Նալբանդյան 20 հեռ. 58-05-13, 58-06-32

8. ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ

Հիվանդ տղաներին զորակոչել են բանակ, չնայած առկա են տարբեր հանձնաժողովների եզրակացությունները:

Մովորաբար, զինակոչիկը բժշկաքննության է ենթարկվում 2 անգամ՝ մինչև զինակոչ և հետո՝ զորակոչի ժամանակ զորակոչային բժշկական հանձնաժողովի կողմից: Տարբեր մասնագետներ հետազոտում են և յուրաքանչյուրն իր մասով տալիս է եզրակացություն: Եթե նույնիսկ բժիշկներից մեկը գտնում է որևէ շեղում, ապա նա ներկայացնում է համապատասխան եզրակացություն և զորակոչիկին ուղարկում են նախարարի հրամանով նախատեսված մասնագիտական բուժհաստատություն: Ջինապարտների բժշկական քննությունը և հետազոտությունը կատարվում է առաջնահերթ և անվճար: Եթե ներկայացվում է ակտ և գրվում բժշկական եզրակացություն, որ, ըստ նախարարի հրամանի բժշկական հիվանդությունների ցանկի, զինակոչիկը պիտանի չէ ծառայության, ապա նա ազատվում է զինծառայությունից համապատասխան հողվածով: Իսկ եթե կան առարկություններ, պետք է կատարվի կրկնակի հետազոտություն, բոլոր դեպքերում նրանց եզրակացությունը պետք է հաստատվի Կենտրոնական հանրապետական հանձնաժողովի կողմից:

Եթե կա բողոք, պետք է դիմել դատախազին: Կարելի է նշանակել բժշկական նոր հանձնաժողով, որի եզրակացությունը կհամարվի վերջնական:

Ծնողը կարող է դատի տալ այն մարդկանց, ովքեր անտեսել են հանձնաժողովների եզրակացությունները:

* * *

Ջորակոչիկը երկկողմանի որբ է: Ապրում է պապիկի և տատիկի հետ, գրանցված է նրանց տանը: Տատիկը և պապիկը նրա խնամակալներն են:

Ջորակոչիկն ունի՞ արդյոք տարկետման իրավունք:

Եթե քաղաքացին մինչև զորակոչային տարիքի հասնելն առնվազն 5 տարի եղել է որդեգրված, կամ ծնողներն ամուսնալուծվել

են առնվազն 5 տարի առաջ, և կան ՉՄ օրենքի 13 հոդվածով նախատեսված պայմաններից որևէ մեկը, ապա նա օգտվում է պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու իրավունքից:

* * *

Ջորակոչիկը դատապարտված է եղել ազատագրկման 2 տարի 3 ամիս ժամկետով: Նախագահի համաներման հրամանով ազատվել է: Նա կարող է զորակոչվել:

Պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու ենթակա չեն այն անձինք, որոնց նկատմամբ կատարվում է հետաքննություն (նախաքննություն, դատաքննություն) կամ ովքեր նախկինում դատապարտվել են ազատագրկման՝ ծանր կամ առնվազն 2 անգամ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար և ազատագրկման վայրում պատիժը կրել են 3 տարուց ոչ պակաս, ինչպես նաև, եթե կատարել են Հայաստանի Հանրապետության պաշտպանության և Հայաստանի Հանրապետության դատախազության հաստատած ցանկում նշված հանցագործություն:

* * *

«Զինապարտության մասին» օրենքով չնախատեսված դեպքերում, ինչպես է ձևակերպվում զորակոչիկի տարկետման իրավունքը:

* Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից սույն օրենքով չնախատեսված ընտանեկան դրության բերումով տարկետում տալու մասին որոշումն ընդունում է պաշտպանության նախարարը՝ հանրապետական զորակոչային հանձնաժողովի եզրակացության առկայության դեպքում:

* Մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովները կազմում է կառավարությունը: Հանձնաժողովի նախագահ է համարվում համապատասխան մարզպետը (Երևանի քաղաքպետը):

Մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովները՝

- համակարգում են տեղական գորակոչային հանձնաժողովների գործունեությունը,

- հաստատում են գորակոչիկներին ընտանեկան դրության բերումով և ուսումը շարունակելու համար տարկետում տալու մասին տեղական գորակոչային հանձնաժողովների որոշումները,

- որոշում են ընդունում գորակոչիկներին ընտանեկան դրության բերումով սույն օրենքով չնախատեսված դեպքերում տարկետում տալու վերաբերյալ և դա ներկայացնում հանրապետական գորակոչային հանձնաժողով:

* * *

Մայրը տարիներ առաջ որդեգրել է մի արու զավակ: Այժմ մայրն անաշխատունակ է և բնակարանում գրանցված են միայն երկուսը: Մոր մահից հետո որդին ենթակա՞ է գորակոչման:

Ըստ «Զինապարտության օրենքի», կենսապայմաններից ելնելով տարկետում ստանալու իրավական հիմքը վերանում է, հետևապես նա ենթակա է գորակոչման:

* * *

Ո՞րն է այլընտրանքային ծառայության անցնելու հիմքը:

1. Այլընտրանքային ծառայության կարող են անցնել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որի կրոնական դավանանքին կամ համոզմունքին հակասում են ռազմական ստորաբաժանումներում զինվորական ծառայություն անցնելը, ինչպես նաև զենք կրելը, պահելը, պահպանելը և օգտագործելը:

2. Պարտադիր զինվորական ծառայություն անցնող Հայաստանի Հանրապետության քաղաքացին չի կարող հրաժարվել իր ծառայությունից և ընտրել այլընտրանքային ծառայություն

* * *

Որո՞նք են այլընտրանքային ծառայության տեսակները:

Այլընտրանքային զինվորական ծառայության տևողությունն է

36 ամիս, իսկ աշխատանքային այլընտրանքային ծառայությանը՝
42 ամիս:

* * *

**Կարող է, արդյո՞ք, այլընտրանքային ծառայության գորակոչ-
ված զինակոչիկը հրաժարվել ծառայության այդ տեսակից: Եթե
կարող է, ապա ի՞նչ պայմանով և ի՞նչ ժամկետներում:**

*Այլընտրանքային զինվորական ծառայությունը փոխարինվում է
պարտադիր զինվորական ծառայությամբ, եթե այլընտրանքային
զինվորական ծառայողն այդ մասին դիմում է ներկայացնում զորա-
մասի հրամանատարին՝ զորակոչվելուց 6 ամսվա ընթացքում:*

* * *

**Երեխաս հիվանդ է գիշերամիզությամբ, սակայն հիվանդանոց-
ներում չեն կարողանում ախտորոշել այդ հիվանդությունը: Հայաս-
տանի ո՞ր բուժհաստատությունում կարելի է անցկացնել այդ հե-
տազոտությունը:**

*«Էրեբունի» բժշկական կենտրոնում, որտեղ գտնվում է գիշերա-
միզության ախտորոշման սարքը:*

ՁԵՌՆԱՐԿՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ Ց Ա Ն Կ Ը

- ՀՀ - Հայաստանի Հանրապետություն
- ՊՆ - Պաշտպանության Նախարարություն
- ԶՈՒ - Զինված ուժեր
- ԶՄ - Զինապարտության մասին
- ԶԿ - Զինվորական կոմիսարիատ
- ԶՀ - Զինվորական հանձնաժողով
- ԶԾ - Զինվորական ծառայություն
- ՀՀ Սահմ. - Հայաստանի Հանրապետության
Սահմանադրություն
- գ. - գլուխ
- հ. - հոդված
- մարզպետ - մարզային պետ
- զինկոմ - զինվորական կոմիսար
- զինծառայություն - զինվորական ծառայություն
- բուհ - բարձրագույն ուսումնական հաստատություն